

«ԱՂՐԱԲԵԶԱՆՑԻՆԵՐԸ», «ԿՈՎԿԱՍԱԼԵԶՈՒՆԵՐԸ»

ԵՒ «ԻՐԱՆԱԼԵԶՈՒՆԵՐԸ».

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԱՂՐԱԲԵԶԱՆՈՒՄ

Հրանտյոշ Խառատեան

Սոյն յօդուածում Ադրբեջանի, Ադրբեջանի բնակչութեան եւ «ադրբեջանցիների» ինքնութեան զարգացումների խնդիրը դիտարկուած է գլխաւորապէս Ադրբեջանի բնակչութեան էթնիկ բազմազանութեան եւ այդ բազմազանութեան փոփոխութիւնների հենքի վրայ: Յօդուածում քննարկուող հարցերի շարքում քսաներորդ դարի Ադրբեջանի հայ բնակչութեան խնդիրը սոյն յօդուածում չի քննարկուելու այդ խնդրի խիստ մասնաւոր բնոյթի պատճառով:

Ադրբեջանի բնակչութեան ազգային բարդ խճանկարը որեւէ մէկի համար գաղտնիք չէ: Ներկայիս Ադրբեջանի հանրապետութեան տարածքը պատմականօրէն միշտ ունեցել է բազմազգ կազմ: Մեր թուարկութեան սկզբներին այդ տարածքի հիւսիսում պատմական բուն Աղուանքի տարածքում, Կուր գետից հիւսիս, ապրում էին կովկասեան, գլխաւորապէս՝ լեզգիականին մօտ լեզուներով խօսող մօտ երեք տասնեակ էթնոցեղային միաւորներ, որոշ չափով՝ իրանալեզուներ՝ կազմելով պատմական բուն Աղուանքի բնակչութիւնը: Ունենալով իրենց ինքնանունները եւ արտանունները, նրանք հաւաքական անունով յայտնի էին որպէս «աղուաններ»: Հաւանաբար Դ.-Ե. դարերում նրանց միանում են նաեւ «հոններ» հաւաքական անունով յայտնի թրքալեզու որոշ խմբեր, գլխաւորապէս՝ ներկայիս Դաղստանի հարաւային տարածքներում: Կուրից հարաւ հայոց պատմական Արցախ եւ Ուտիք նահանգներում ապրում էին հայեր, Կուրի

մերձակայ հատուածում՝ հաւանաբար նաեւ կովկասալեզուներ: Զ. դարում իրանալեզու նոր շերտ է աւելանում, ամենայն հաւանականութեամբ ներկայիս թաթերի նախնիները, ապա՝ որոշ չափով արաբալեզու բնակչութիւն, իսկ աւելի ուշ՝ դարձեալ իրանալեզու, քրդական ցեղային կազմաւորումները, իսկ ԺԱ.-ԺԲ. դարերից սկսում են բնակութիւն հաստատել թրքալեզու խմբերը: Բ.յ. երկրորդ հազարամեակը ներկայիս Ադրբեջանի տարածքի բազմալեզու խմբերի ներքին տեղաշարժերի, մահմեդականացման ամբողջացման եւ գլխաւորապէս իշխող թրքալեզուների մէջ ձուլման շրջան էր, ինչը պարբերաբար ընդունում էր խիստ ազդեալիւ ձեւեր: Ըստ աղբիւրագիտական տեղեկութիւնների՝ այդ գործընթացը սրուել էր յատկապէս ԺԷ.-ԺԸ. դդ., երբ Պարսկաստանից ներթափանցած թրքախօս շիա ղզլբաշներն արդէն բաւական ամուր հաստատուել էին եւ ձեւաւորել Դուբայի, Շիրվանի, Բաքուի, Լարաբաղի եւ այլ խանութիւնները: Այդ շրջանում տեղի կովկասալեզու բնակչութիւնը սուլանի ուղղութեան հետեւորդներ էին, իրանալեզու թաթերն ու թալիշները եւ թրքախօսների մեծ մասը, յատկապէս՝ ղզլբաշները, շիւքմի հետեւորդներ էին, իսկ հայերն ու կովկասալեզու ուղիները՝ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ քրիստոնեաներ: Ուղիների մէջ որոշ թիւ էին կազմում նաեւ վրաց ուղղափառութեան հետեւորդները:

Հարաւային Կովկասին իշխելու Դրանի եւ Թուրքիայի ձգտումները պարբերաբար վեր էին ածուծում ռազմական ընդհա-

րումների, որոնց ընթացքում Թուրքիայի կողմից հարկադրուած էր սուլանի մահմեդականութիւնը, ինչը հանդիպում էր թրքալեզու ղզլբաշների կատաղի դիմադրութեանը: Սակայն Իրանի եւ Թուրքիայի միջեւ հաշտութեան տարիներին էլ Հարաւային Կովկասում կրօնական ճնշումները չէին նուազում: Օրինակ՝ 1639 թ. մինչեւ 1723 թ. Պարսկաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնները խաղաղ էին եւ Այսրկովկասի ժողովուրդներն այդ պետութիւնների կողմից արշաւանքների, տեղահանութեան ու բռնութիւնների չէին ենթարկուած, սակայն տարածքում հաստատուած թրքալեզու ղզլբաշներն իրենք էին ճնշումներ գործադրում տեղաբնիկ բնակչութեան, յատկապէս՝ քրիստոնեաների վրայ՝ հարկադրելով նրանց մահմեդական դառնալ¹: Իսկ աւելի ուշ՝ ԺԸ. դ. առաջին կէսին, մահմեդականացող տեղաբնիկները սուլանի մահմեդական էին դառնում արդէն Օսմանեան Թուրքիայի ճնշման տակ: ԺԹ. դ. երկրորդ կէսին, օրինակ, Նուխու (Շաքիի) գաւառի մահմեդական բնակչութեան մէջ 9,130 տուն սուլանի ուղղութեան էր պատկանում, եւ ընդամենը 161 ծուխ շիաներ կային²: Սուլանիների մեծ մասը, ըստ տեղեկութիւնը հաղորդող հեղինակ Ա. Արասխանիանցի, նախկինում հայ առաքել-

ական եկեղեցու հետեւորդներ էին: Սուլանիների եւ շիաների յարաբերակցութիւնը հասկանալը կարեւոր է, քանի որ Ադրբեջանի դէպքում դրանք զգալիօրէն էթնիկ ծագումնաբանութեան ցուցիչներ են. տեղաբնիկ կովկասալեզու ժողովուրդներն այսօրուայ Ադրբեջանում հիմնականում սուլանիզմի հետեւորդներ են, իրանալեզու թաթերն ու թալիշները շիաներ են, շիաներ էին նաեւ յետագայում «ադրբեջանցի» դարձած ղզլբաշական թրքալեզուները: Նոր պատմութեան շրջանում թրքալեզուների մէջ ձուլուող տեղաբնիկ կովկասալեզուները շարունակում էին սուլանի մնալ, ինչպէս նաեւ հարկադրաբար մահմեդականացուող քրիստոնեաները հետեւում էին սուլանիզմին:

Այսպիսով՝ մինչեւ նոր շրջանի պատմութիւն ներկայիս Ադրբեջանի տարածքի բազմազգ էթնիկ կազմն իրենից ներկայացնում էր տեղաբնիկ կովկասալեզու էթնիկ միաւորների մի շարք, իրանալեզու թաթեր, թալիշներ, քրդեր, տարբեր ինքնութիւններով թրքալեզու խմբեր՝ այրումներ, փաղարներ, թեքերուներ, կենդերուներ...

Նոր պատմութեան շրջանում ներկայիս Ադրբեջանի էթնիկ խճանկարը հարստացաւ նոր վերաբնակիչներով, գլխաւորապէս՝ սլաւոնալեզու ռուսներով, ուկրաինացիներով, որոշ չափով՝ հրէաներով, գերմանացիներով եւ այլն:

ԺԹ. դ. սկզբներին ներկայիս Ադրբեջանի տարածքի հիւսիսային հատուածի Բելոկանիի, Զաքաթալայի եւ Կախիի շրջաններում, որոնց տարածքը Դաղստանում յայտնի է «Յոր» (աւարերէն «Այօր», հայկական աղբիւնների «Ճոր»-ը - Հ. Խ.) անունամբ եւ որին Դաղստանի հասարակական կառույցները յաճախ անուանում են «Հարաւային Աւարստան», բնակչութեան

1 И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане, Армении в 18 начале 19 вв., Л., 1949; Г. Аракелян, Некоторые этно-культурные процессы в Восточном Закавказье в 17-18 вв., "Взаимодействия и взаимовлияния цивилизаций и культур на Востоке. 3-ий всесоюзный конгресс востоковедов", Москва, 1988; Г. С. Харатян, Этно-культурная характеристика зоны Шеки-Кабала, "Научная мысль Кавказа", 2003, # 3; 2. Խառատեան, Ուղիների ողիսակամը 18-20-րդ դդ. (Պատմութիւն, էթնիկ գոյատեւում, ինքնաճանաչում), «Հայոց մեծ եղեռն-90», Երևան, 2005:
2 А. Н. Арасханяни, Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии - Материалы для изучения экономического быта Государственных крестьян Закавказского края, т. 4, Тифлис, 1887, с. 18:

մէջ գերիշխում էին աւարները³ եւ լեզգիները⁴, որոնց թիւն այդ հարիւրամեակում գործնականում ոչ միայն չի նուազել, այլեւ աճել է⁵: 1912 թ. Ջաքաթալայի շրջանի ամբողջ՝ 81,100-ի հասնող բնակչութեան 64,7%-ը կազմում էին աւարները⁶:

Լեզգիներից եւ աւարներից զատ, ներկայիս Ադրբեջանի հիւսիսում ժ.թ. դ. շարունակում էին ապրել կովկասալեզու այլ էթնիկ միաւորներ, այդ թւում՝ ախալսներ⁷,

3 Աւարներ, ինքնանունը՝ մարուպա: Աւարներն լեզուն կովկասեան է: Աւարների հիմնական մասն ապրում է Դաղստանում (758,438 մարդ): Ադրբեջանում աւարներն ապրում են գլխատրապէս Բելոկանի եւ Ջաքաթալայի շրջաններում (ըստ 2009 թ. մարդահամարի նիւթերի՝ 49,800 մարդ):

4 Լեզգիներ, ինքնանունը՝ լեզգի: Լեզգիներն արեւելակովկասեան լեզուներից է: Ապրում են Դաղստանի հարաւում եւ Ադրբեջանի հիւսիսում՝ կուսարիի, Ղուբայի, Խաչմասի, Իսմաիլիի, Օղուզական (նախկին Վարդաշէն), Գեօրջայի, Աղդաշի եւ Կախիի շրջաններում, ինչպէս նաեւ՝ քաղաքներում: Ադրբեջանում այսօր ադրբեջանցիներից լատոյ իրենց թուաքանակով երկրորդ տեղում են: Լեզգիների թիւը Ռուսաստանում 2010 թ. 474 մարդ էր, Ադրբեջանում՝ 2009 թ. մարդահամարի նիւթերով՝ 180 հազար: 1886 թ. Ռուսական կայսրութիւնում լեզգիների թիւը հասնում էր 652,000-ի. <http://www.demoscope.ru/weekly/2005/0187/perep04.php>:

5 **М. М-цев**, *О джарджях и лезгинских племенах на Кавказе*, СПб., 1858; **Д. Зубарев**, *Поездка в Кахетию, Тушетию, Пшавию, Хевсурию и Джаро-Белоканскую область*, -/ Русский Вестник. 1841, с. 552-554; **М. А. Коцебу**, *Сведения о джарджских владениях. 1826 г.*, - Сборник документов. История, география и этнография Дагестана (ИГЭД). М., 1958, с. 263; **Велили (Бахарлы) Мамедгасан**, *Этнография Азербайджана*, - Азербайджан и азербайджанцы в мире, Баку, 2009, # 2, с. 11:

6 *Весь Кавказ*, Баку, 1914, с. 465:

7 Ախալսներ, ինքնանունը՝ աշաдо, աւարներն ախալսներիցն անուանում են raxwabalal: Ախալսներն շատ մօտ է աւարներին: Ադրբեջանում ապրում են գլխատրապէս Ջաքաթալայի շրջանի Օխոխ դերէ (Ախալս դերէ) գիւղում: Ախալսների թիւն, ըստ պաշտօնական մարդահամարի տուեակների, Դաղստանում 6,362 մարդ է, Ադրբեջանում՝ մօտ 2,000 մարդ (*Дагестанские народы Азербайджана*, Москва. 2006, с. 87):

դարգիններ⁸, աղուլներ⁹, ցախուրներ¹⁰, ռուսուլներ¹¹, հափուլներ¹², խինալուլներ¹³,

8 Դարգիներ, ինքնանունը՝ դարգան, դարգանտի. դարգուա: Դարգիներն արեւելակովկասեան լեզուներից է: Ըստ 2010 թ. մարդահամարի նիւթերի՝ Ռուսաստանում դարգիների թիւը 589,396 մարդ է, որից Դաղստանում են 490,384-ը: Դարգիները հիմնականում ապրում են Դաղստանում:

9 Աղուլներ, ինքնանունը՝ агъулар, լեզուն՝ արեւելակովկասեան լեզուների լեզգիական խմբի: Ապրում են Դաղստանի հարաւում, որտեղ կայ Աղուլական շրջան, փոքր մասը՝ Ադրբեջանի հիւսիսում: Հնարար է, որ «աղուլ» էթնանունը համապատասխանում է կովկասեան Աղուանքի՝ հինգերորդ դարի հայկական աղբիւրներում յիշատակուող «աղուսականք» էթնանունը: 1989 թ. մարդահամարի նիւթերով՝ Ռուսաստանում աղուլների թիւը 18,740 մարդ էր:

10 Ցախուրներ, ինքնանունը՝ йыкъды, ulalxды: Ցախուրներն արեւելակովկասեան լեզուների լեզգիական խմբի լեզուներից է: Ապրում են Դաղստանի հարաւում եւ Ադրբեջանի հիւսիսում, հիմնականում՝ Ջաքաթալայի եւ Կախիի շրջաններում: Ցախուրների մասին տեղեկութիւնները յայտնի են առնուազն հինգերորդ դարի հայկական աղբիւրներից, այնուհետեւ վրացական, արաբական աղբիւրները լրացրել են այդ տեղեկութիւնները: Ժ.Ե. դ. Ցախուր բնակավայրի շուրջ ձեւաւորել է խանութիւն, որի կենտրոնն ակնի ուշ տեղափոխուել է Էլիսու եւ դարձել Էլիսուի սուլթանութիւն: 1844 թ. Էլիսուի սուլթանութիւնը չեղեալ է յայտարարուել ցարական Ռուսաստանի կողմից, քանի որ այն անցել էր Ռուսաստանի դէմ պայքարող Օսմիլի կողմը: Ցախուրների թուաքանակի մասին տեղեկութիւնները միշտ կասկածելի են եղել: 1926 թ. մարդահամարի նիւթերով՝ Ադրբեջանում ապրում էր 15,552 ցախուր, իսկ 2009 թ. մարդահամարի նիւթերով՝ 12,300: Ցախուրների մասին տե՛ս **А. Дирр**, *Цахурский язык*, Грамматический очерк, тексты, сборник цахурских слов с русским к нему указателем, SMOMPK 43(3), 1913; **А. И. Исламмагомедов**, **Г. А. Сергеева**, *Цахуры*, <http://www.etnosy.ru/node/463>; <http://nka.ru/cahury.html>; **Г. Х. Ибрагимов**, *Цахурский язык*, Москва, Наука, 1990; **John M. Clifton**, **Calvin Tiessen**, **Gabriela Deckinga**, and **Laura Lucht**, *The Sociolinguistic Situation of the Tsakhur in Azerbaijan*, SIL International, 2005, <http://www.sil.org/silesr/2005/silesr2005-016.pdf>:

11 Ռուսուլներ, ինքնանունը՝ мыхлад, մըղադրոփ, մըղադար, ռուսուլ, ԼԵՂԷԿՊԵ: Ռուսուլներն արեւելակովկասեան լեզուների լեզգիական խմբի լեզուներից է: Ապրում են Դաղստանի հարաւում եւ Ադրբեջանի հիւսիսում, հիմնականում՝ Օսքիի

շրջանում: Ռուսուլների թուաքանակի մասին տեղեկութիւնները միշտ կասկածելի են եղել: 1989 թ. մարդահամարի նիւթերով՝ Ադրբեջանում ցուց է տրուած 336 ռուսուլ: Ռուսուլների մասին տե՛ս <http://www.chernovik.net/news/225/ EN-TER/2007/05/18/3114>; <http://www.narodru.ru/peoples1259.html>; [http://ru.dofollow.be/wiki/%D0%A0%D1%83%D1%82%D1%83%D0%BB%D1%8C%D1%86%D1%8B; **А. Г. Булатова**, *Рутульцы в XIX - начале XX вв. \(историко-этнографическое исследование\)*, М., 2003. 280 с.; **А. Г. Булатова**, **Г. А. Сергеева**, *Рутульцы*, <http://www.narodru.ru/peoples1259.html>; **Э. И. Исмаилова**, *Рутульцы и рутульский язык*, \[http://etnos.milzberg.ru/rutul/one_stat.php?id=501\]\(http://etnos.milzberg.ru/rutul/one_stat.php?id=501\):](http://ru.dofollow.be/wiki/%D0%A0%D1%83%D1%82%D1%83%D0%BB%D1%8C%D1%86%D1%8B)

12 Հափուլիներ, խօսում են արեւելակովկասեան լեզգիական խմբի հափուլիներն լեզուով, ապրում են հիմնականում Ադրբեջանի Ղուբայի շրջանի Հափուլ (Haput, Гапур) գիւղում, ինչպէս նաեւ Խաչմասի շրջանում եւ քաղաքներում: Ժ.Թ. դ. առաջին կեսին Ղուբայի շրջանում կար հափուլիական չորս բնակավայր (Ս. Н. Ягодынский, *Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии*, МИЭКБЗКЗК, т. II, ч. 1, Тифлис, 1884, с. 166), Գեօրջայի եւ Օսմախու շրջաններում՝ հինգ բնակավայր (**Н. А. Абелов**, *Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии*, МИЭКБЗКЗК, т. VI, ч. 2, Тифлис, 1887, с. 15), Նուխիում (Օսքի)՝ երկու բնակավայր (**А. А. Арасханяни**, *Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии*, МИЭКБЗКЗК, т. VII, ч. 1, Тифлис, 1887, с. 19): Ժ.Թ. դ. կեսերին հափուլիների մի մասը բնակութիւն փաստաւեց այսօրուայ Իսմաիլիի եւ Աղդաշի շրջաններում եւ հիւնեց Հափուլու-Մելիքլու, Հափուլու-Նեթե-Ղաջար, Հափուլու-Սուլի Իսաղի եւ այլ բնակավայրերը (**С. Н. Ягодынский**, *Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии*, с. 166). Ժ.Թ. դ. 80-ական թթ. Մուշկուրում ապրում էր 1,433 հափուլի (*Списки населенных мест Российской империи*, Бакинская губерния, т. 65, Тифлис, 1870, с. 96), իսկ Գեօրջայի եւ Օսմախու մարզերում՝ 710 հափուլի (**Н. А. Абелов**, *Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии*, с. 15): Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տեղեկութիւններով՝ Ելիզաւետպոլի նահանգում 1886 թ. հափուլիները կազմում էին բնակչութեան 0,21%-ը (1,520 մարդ), իսկ Ղուբայի եւ Բաքուի նահանգներում՝ 1,2%-ը (2100 մարդ) (http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm): Այսպիսով՝ Ժ.Թ. դարում ներկայիս

Ադրբեջանի տարածքում ապրում էր առնուազն 6,000 հափուլի: Ադրբեջանի պաշտօնական մարդահամարների ցանկում հափուլիները երբեք չեն ընդգրկուել, սակայն, ըստ այլ աղբիւրների, 2005 թուականին կրիզների եւ ջեկերի հետ միասին հափուլիներն Ադրբեջանում 10-15 հազար թիւ են կազմել (*The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan*; <http://istovjajvor.tk/naxsko-dagestanskie-narody/kryzy#more-184>; <http://istovjajvor.tk/structure/naxsko-dagestanskie-naro dy>):

13 Խինալուլներ, ինքնանունը՝ կետշ, կատտիդդոր, ադրբեջանցիները Խինալուլ գիւղի անունով կոչում են xinalqilar: Խօսում են արեւելակովկասեան լեզգիական խմբի խինալուլներն լեզուով, ապրում են հիմնականում Ադրբեջանի Ղուբայի շրջանի բարձրլեռնային Խինալուլ գիւղում, մասամբ՝ Վլադիմիրովկա գիւղում: Խինալուլ գիւղը կովկասի ամենաբարձր լեռնային բնակավայրերից է: Չմոռանալ երբեմն ամբողջովին կտրուում են հաղորդակցութեան հնարարութիւններից: Մինչեւ 2009 թ. մարդահամարը համարում էր, որ Ադրբեջանում կայ 1,5-3 հազար խինալուլ: 1926 թ. մարդահամարի նիւթերով՝ Ադրբեջանում գրանցուել է 105 խինալուլ, այնուհետեւ այս ժողովուրդը մարդահամարներում ցուց չի տրուել մինչեւ 2009 թ. մարդահամարը: Վերջինս գրանցել է 2,200 խինալուլ: Խինալուլների մասին տե՛ս **В. Легкобытов**, *Кубинская провинция*, ОРВЗК, ч. IV, СПб, 1836; **Ф. Шнитников**, *Описание Кубинской провинции 1832 г.*, - История, география и этнография Дагестана, М., 1958; *Народы Кавказа*, т. II, М., 1962; **С. И. Брук**, *Население мира*, Этнодемографический справочник, Москва, «Наука», 1986, с. 167; *“Xinalqilar” maqalasi*, *Azerbaijan Sovet Ensiklopediyasi*, X cild, Bakı, 1987, səh. 89; *Забывтый в горах Кетви*, - «Вокруг света», #5 (2692), Май 1998; **John M. Clifton**, *The future of the shahdag languages*, 2009; **John M. Clifton and others**, *The sociolinguistic situation of the Khinalug in Azerbaijan*, 2002; **John M. Clifton and others**, *The sociolinguistic situation of the Khinalug in Azerbaijan*, 2005.; **John M. Clifton** (editor), *Studies in languages of Azerbaijan*, vol. 1, 2002; **G. Javadov**, *Living antiquity of the Caucasus*, 2002; **M. P. Lewis** (ed.), *Ethnologue: Languages of the World*, Sixteenth edition, Dallas, Tex.: SIL International, 2009, online version: <http://www.ethnologue.com/>; *Ethnologue: Languages of the World: Khinalugh* (1,500. All domains. 30% to 50% of children speak Khinalugh. Positive language attitude. Azerbaijani is used as the literary language):

Ջեկեր¹⁴, կրիզներ¹⁵, բուրգներ¹⁶, ալիկներ¹⁷, երգիչներ¹⁸, ուղիներ¹⁹, ինգիլո-

14 Ջեկեր, խօսում են արեւելակովկասեան լեզգիական խմբի ջեկերէն լեզուով, ապրում են հիմնականում Ադրբեջանի Ղուբայի շրջանի բարձրլեռնային՝ 1600-2000 մետր բարձրութեան վրայ գտնուող Ջեկ գիւղում: Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տունալներով՝ 1886 թ. ջեկերը Ղուբայի տարածքում ապրող բնակչութեան 4,2%-ն էին կազմում (7,350 մարդ) (http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm): Մի տեղեկութեան համաձայն՝ 1999 թ. Ջեկ գիւղում ապրում էր 1,105 մարդ (<http://www.peoplegroups.org/Detail.aspx?PID=24097>), մէկ այլ տեղեկութեամբ՝ 500 մարդ (<http://www.peoplegroups.org/Detail.aspx?PID=24097>): Կայ նաեւ տեղեկութիւն, ըստ որի 2005 թ. ջեկերի թիւը կրիզների եւ հափտըիների հետ միասին 10-15 հազար էր (*The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan*; <http://istovjyavtor.tk/naxsko-dagestanskienarody/kryzy#more-184>; <http://istovjyavtor.tk/structure/naxsko-dagestanskienarody>): Ադրբեջանական պաշտօնական մարդահամարներում ջեկերը յիշուել են միայն մէկ անգամ՝ 1926 թ., ըստ որի ջեկերի թիւն Ադրբեջանում եղել է 607 մարդ: Տե՛ս նաեւ **Б. А. Введенский**, *Большая советская энциклопедия: Джеки*, т. 14; *Большая Энциклопедия в 62 томах: Джеки*; **Н. Нәвилев**, *Azərbaycan etnoqrafiyası*, Bakı, Elm, 1991. səh. 40; **Тәрхан Раşазадә**, *Dünyanın nadir etnik qrupu - Azərbaycan ceklləri*, - Azərbaycan qəzeti, 21 iyun 2007: **Тәрхан Раşазадә**, *Cek və ceklilər Azərbaycanın milli dəyəridir*, - Azərbaycan Respublikasının Mədəniyyət və Turizm Nazirliyinin keçirdiyi "Mədəni müxtəliflik: sosial - siyasi dəyər kimi" mövzusunda Kulturoloqların II Milli Forumunun (Beynəlxalq elmi-praktik konfrans) materialları, Bakı, "Elm", 3 iyun 2010, səh. 422-431:

15 Կրիզներ, ինքնանունը՝ գրիզիլա, хърыцаа, хърыцаа: Խօսում են արեւելակովկասեան լեզգիական խմբի կրիզերէն լեզուով, բնակւում են Ղուբայի, Խաչմասի, Իսմաիլիի եւ Ղաբալայի /նախկին Կուսկաշէն/ շրջանների մի քանի գիւղերում, Բաքու եւ Սումազայիթ քաղաքներում (<http://istovjyavtor.tk/naxsko-dagestanskienarody/kryzy#more-184>; <http://istovjyavtor.tk/structure/naxsko-dagestanskienarody>): 2171,4 մ ծովի մակերէնային քարձ գտնուող Կրիզ գիւղում այժմ կայ 30-40 տուն՝ 368 մարդով: Шыхбала Крызлы-и (Сулейманов) «Крыз ве Крыз дили» (Կրիզներ եւ կրիզերէն լեզուն) գրքում (Բաքու, 2002) բերուած է Խաչմասի շրջանում ապրող կրիզների բնակավայրերի ցուցակը (Гаджи газма, Гаджиахмед-оба, Ахмед-оба, Гаджи-Гурбан-оба, Манчар-оба, Шариф-оба, Узун-оба, Мечид-оба, Ятаг-оба, Тиканлы-оба, Наги-оба, Гаджи-Абдулрагим-оба,

Сибир-оба, Палчыг-оба, Чинар-тала, Молла-оба, Агаширин-оба, Пиргулу-оба, Гаджимамед-оба, Агаверди-оба, Идрис-оба, Фарзали-оба, Наджаф-оба, Шумагир): Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տունալներով՝ Ժ. Գ. Ղուբայի տարածքի ընդհանուր բնակչութեան (175,000 մարդ) 1,1%-ը կազմում էին կրիզները, այսինքն՝ 1,925 մարդ (http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm): Ըստ տեղեկութիւնների՝ Ժ. Գ. 30-40-ական թթ. յայտնի էին կրիզական 58 փոքր բնակավայրեր (<http://istovjyavtor.tk/naxsko-dagestanskienarody/kryzy#more-184>; <http://istovjyavtor.tk/structure/naxsko-dagestanskienarody>), յայտնի է նաեւ, որ Մուշկուրի հարթավայրում ապրում էր 5,100 կրիզ (П. В. Котляревский, *Экономический быт государственных крестьян в южной части Кубинской губернии*, МИЭБГКЗК, т. 1, 1886, с. 296), որոնց մեծ մասն, ըստ երեւոյթի, ապրում էր ներկայիս Խաչմասի շրջանում (А. Мустафаев, *Грызы. Отголоски этнической истории Азербайджана*, - Этнос, 2(38), 2009): Ն. Զեդրիցի՝ սուլային տնտեսութիւնների ցուցակների վրայ հիմնուած տեղեկութիւնների համաձայն՝ 1886 թ. կրիզների թիւը 7,767 էր (տե՛ս <http://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D1%80%D1%8B%D0%B7%D1%8B>): 1926 թ. մարդահամարի ժամանակ ամբողջ ԽՍՀՄ-ում ընդամենը 5 կրիզ է գրանցուել: Մարդահամարի արդիւնքների ամփոփման տեղեկութիւններում յայտնուում է, որ կրիզների գրանցել են ջեկերի անուամբ (http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_nac_cen.php?reg=0), ջեկերն էլ մարդահամարում անկայ են միայն 607 մարդով: Կրիզները մարդահամարներում «ի յայտ են գալիս» 1959 թ.՝ 183 մարդ, եւ Ադրբեջանի վերջին՝ 2009 թ. մարդահամարի ցուցակներում՝ 4,400 մարդ, չնայած 1990-2000 թթ. Կատարում անկախ հետազոտութիւններից մէկի համաձայն՝ այդ ժամանակ կրիզների թիւը եղել է 6-8 հազար մարդ (John M. Clifton, Janfer Mak, Gabriela Deckinga, Laura Lucht, and Calvin Tiessen, *The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan*, SIL International, 2005. տե՛ս <http://www.sil.org/silesr/2005/silesr2005-006.pdf>):

16 Բուրգներ, ինքնանունը՝ բուրադ, խօսում են արեւելակովկասեան լեզգիական խմբի բուրգներէն լեզուով, ապրում են Բուրգուլ անունով բարձրլեռնային գիւղում, ինչպէս նաեւ խիստ դժուարամատչելի բարձրլեռնային Դեյի Գայա, Գիւնէլ Բուրուլ, Եալաւանջ, Դագուստու բնակավայրերում (*Народы Кавказа*, т. 2, Москва, 1962: **Rafiq Abdullayev**, *Buduq kəndi uzun əsrilər boyu* *Фз varlıgını qoruyub saxlaya bilib*, <http://www.paritet.az/olke/2989.html>): Քսաներորդ դարի 50-ական թթ. Բուրուլ գիւղն ուներ 500-ից անէլի տուն, այսօր՝ միայն 50 (*Кавказский узел. Азерб.*

байджан: вымирающие языки, <http://www.kavkaz-uzel.ru/articles/46314>): 1926 թ. մարդահամարը Ադրբեջանում գրանցել է միայն մէկ բուրգուլ: 1990-ական թթ. սկզբներին Բուրուլ գիւղի վարչութեանը ենթարկուող Բուրուլ, Եալաւանջ, Դագուստու գիւղերում միասին ապրում էր 780 բուրգուլ (<http://www.irs-az.com/pdf/090621163358.pdf>; <http://ru.wikipedia.org/wiki/%D0%91%D1%83%D0%B4%D1%83%D0%B3>): Լեզգիական աղբիւրները խօսում են 1,5 հազար բուրգուլների մասին (http://alpan.clan.su/dir/wikipedia_org_wiki_khi_nalugcy_material_iz_vikipedii/10-1-0-207), Ժ. Գ. աղբիւրների համարութեամբ կարելի է խօսել 4,500-5,000 բուրգուլների մասին (<http://www.irs-az.com/pdf/090621163358.pdf>; http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm) (Вагиф Пириев, *Будузи*, <http://www.irs-az.com/pdf/090621163358.pdf>): Չնայած, ըստ ադրբեջանցի պրոֆեսոր Վազիֆ Փիրիեյի, բուրգուլներն այսօր անկախ մասնակցութիւն ունեն Ադրբեջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ մշակութային կենտրոն (Вагиф Пириев, *Будузи*, www.irs-az.com), այնուամենայնիւ, նրանք մարդահամարային ժողովուրդների ցանկերում չկան: Բուրգուլների մասին տե՛ս նաեւ **В. Легкобытов**, *Кубинская провинция*, -ОРВЗК, ч. IV, СПб, 1836; **Ф. Шнитников**, *Описание Кубинской провинции 1832 г.*, - История, география и этнография Дагестана, М., 1958; **К. Алиев**, *К вопросу о племенах Кавказской Албании*, - Исследования по истории и культуре народов Востока, М.- Л., 1960, 18 с., *Народы Кавказа*, т. 2, Москва, 1962; **Р. М. Касимова**, *Антропологические исследования народностей так называемой шахдагской группы*, - Азербайджанский этнографический сборник, вып. 1, Б., 1964, 123 с.; **Вагиф Будули-Пириев**, *Buduq və buduqlular*, Bakı, Sabah, 1994, 138 səh.; **И. Г. Шахбазов**, *Материальная культура народов шахдагской группы в XIX - начале XX в.* (автореф., кандидатская диссертация), Баку, 1981:

17 Ալիկներ, ինքնանունը՝ Յիկիլեր, Յիկի, Յիկեր, ալիկերէն լեզուն արեւելակովկասեան լեզգիական խմբի լեզուներից է, անէլի մօտ է կրիզերէնին: Ալիկերէն լեզուով խօսում է մօտ 600+ մարդ: Ապրում են Ղուբայի եւ Խաչմասի շրջանի մի քանի բնակավայրերում, Ղուբայի շրջանում կայ Ալիկ անունով գիւղ (**В. Г. Гаджиев**, *Сочинение И. Гербера "Описание стран и народов между Астраханью и рекою Курой: находящиеся"* как исторический источник по истории народов Кавказа, - Наука, 1979, с. 226; <http://az.wikipedia.org/wiki/Ceklii%9C9%99r>): Ալիկների՝ որպէս Ադրբեջանում ապրող փոքրաթիւ ժողովրդի կամ ալիկերէնի՝ որպէս մահացող լեզուի մասին, նաեւ՝ որեւէ այլ պաշտօնական յիշատա-

կութիւն երբեք որեւէ մարդահամարում կամ պաշտօնական տեղեկատուում չի եղել:

18 Երգիչներ, ինքնանունը՝ *Yergüclülər*: Երգիչներէնը արեւելակովկասեան լեզգիական խմբի լեզուներից է: Ապրում են Ղուբայի եւ Խաչմասի շրջանների մի քանի բնակավայրերում, մասնատրապէս՝ Ղուբայի շրջանի Երգիչ գիւղում: 1999 թ. տեղեկութեամբ՝ երգիչների թիւը 1,105 մարդ է (<http://www.peoplegroups.org/Detail.aspx?PID=24097>): Երգիչներն գիտեն, բայց անէլի ակտիւ խօսում են բուրգուլներն (<http://www.peoplegroups.org/Detail.aspx?PID=24097>) եւ, իհարկէ, ադրբեջաներէն: Երգիչների մասին երբեք որեւէ մարդահամարում կամ պաշտօնական տեղեկատուում որպէս Ադրբեջանում ապրող փոքրաթիւ ժողովուրդ, մահացող լեզու կամ որեւէ այլ պաշտօնական յիշատակութիւն չի եղել: Երգիչների մասին տե՛ս նաեւ **Rafiq Abdullayev**, *Buduq kəndi uzun əsrilər boyu* *Фз varlıgını qoruyub saxlaya bilib*, <http://www.paritet.az/olke/2989.html>; *Большая Энциклопедия в 62 томах: Ергюджы*:

19 Ուղիներ, ինքնանունը՝ ուղի: Լեզուն՝ ուղերէնը, արեւելակովկասեան լեզգիական խմբի լեզուներից է: Կովկասեան Աղուանքի պատմութեան շրջանից ուղիները Կովկասեան Աղուանքի այն բացառիկ ժողովուրդն է, ով տեսական դիմադրել է մահմեդականացման եւ թրքալեզուացման քաղաքականութեանը եւ մինչեւ այսօր ուղիական ինքնագիտակցութիւնը պահել են բացառապէս քրիստոնէայ մնացածները: Դեռեւս Ժ.Ժ. Գ. Օսարիի, Վարդաշէնի (այսօր՝ Օղուզական) եւ Կուսաշէնի (այսօր՝ Ղաբալայի) շրջանների 40-ից անէլի գիւղերում ապրում էին 50.000-ից անէլի քրիստոնէայ ուղիներ: Ադրբեջանի բոլոր հակահայկական տրամադրութիւնները եւ քրեալի գործողութիւնները միշտ տարածուել են նաեւ ուղիների վրայ, այդ թում 1988-92 թթ., երբ դեռեւս գոյատեւող ուղիների մեծ մասը ստիպուած էր հեռանալ իր հազարամեակների հայրենիքից: 2002 թ. ՌԴ-ում կար 3,721 ուղի (<http://www.perepis2002.ru/index.html?id=17>): Ադրբեջանում այսօր ապրում են ուղիներին կիսով չափ մնացած միակ բնակավայրում՝ Նիծում: Ուղիների մասին տե՛ս **Հ. Խառատեան**, *Ուղիների էթնո-եւ դաւանական պատկանելութեան որոշ հարցեր (19-20-րդ դդ.)*, - Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Ի, Պէլրուք, 2000; **Г. С. Харатян**, *Этно-конфессиональная характеристика зоны Шехи-Кабала*, - "Научная мысль Кавказа", 2003, # 3; **Հ. Խառատեան**, Ուղիների ողիսականը 18-19-րդ դդ., (Պատմութիւն, էթնիկ գոյատեւում, ինքնահաստատում), Հայոց Մեծ եղեռն-90, Երեւան, 2005:

ներ²⁰: Անշուշտ, նաև իրանալեզու թաթեր²¹ եւ թրքալեզու հաւաքականութիւնը,

20 Ինգիլոներ, մահմեդականացած եւ զգալիորէն թրքալեզուացուած վրացիներ, ապրում են Ադրբեջանի հիւսիսարեւմտեան Բելոկանի, Չաքաթալայի եւ Կախիի շրջաններում, ադրբեջանցիների, աւարների եւ ցախուրների հարեւանութեամբ: Վերջին շրջանում ակտիւանում են վրացական ինքնութեան դրսևորումները: Ինգիլոների մասին տե՛ս Թ. Բурджаев, С. Исаев, Б. Алибегов, *Трагедия грузин-ингулоцев*, Тбилиси, 2003; *Этнография и история народов транскавказского региона*, Общественный фонд перспективных исследований «Бастион», Москва, 1999, с. 30; Эдуард Абрамян, *Ингулоцы - грузинский фактор в Азербайджане*, <http://regnum.ru/news/fd-abroad/georgia/875906.html>:

21 Թաթ, ինքնանունը՝ թաթ, պարս, դաղը, լոխուշ: Թաթերէնը հնդեւրոպական լեզուաընտանիքի իրանական խմբի լեզուներից է: Համարում է, որ թաթերի նախնիներն Այսրկովկասում յայտնուել են Սասանեան Պարսկաստանի տիրապետութեան շրջանում (Գ.-Է. դդ.) եւ, լինելով ժամանակի իշխանութեան ներկայացուցիչներ, զգալիորէն ազդել են Արեւելեան Այսրկովկասի մշակութի ու լեզուի վրայ: Պարսկերէնը ներկայիս Ադրբեջանի տարածքում տեւական ժամանակ համարուել է էլիտար լեզու եւ եղել է ժամանակի բարձրաշխարհիկ հասարակութեան շփման լեզուն: Ժ. Գ. թաթերէն լեզուով խօսողները երեք խմբեր էին՝ մահմեդական թաթեր, հայ թաթեր եւ հրէայ թաթեր, որոնց անուանում են/էին նաեւ լեռնային հրէաներ: Սոյն յօդուածում խօսքը գնում է բացառապէս մահմեդական թաթերի մասին: 1886 թ. ռուսական կայսրութիւնում ապրող ժողովուրդների ցուցակում թաթերի թիւը 124,683 մարդ էր [http://www.demoscope.ru/weekly/2005/0187/perep_04.php/](http://www.demoscope.ru/weekly/2005/0187/perep_04.php), իսկ Բրոկհաուզի եւ Եֆրոնի հանրագիտարանում՝ 135 հազար: Թաթերէն լեզուն հետազօտող Բորիս Միլլերին 1925 թ. Բաքում՝ Ադրբեջանի ազգային փոքրամասնութիւնների հարցերով զբաղող վարչութիւնում, ասում են, որ թաթեր համարեա չեն մնացել, թերեւս միայն 7-8 գիւղերում կարելի է հանդիպել թաթերէն լեզուով խօսողների, որոնք էլ գտնում են թրքացման փուլում: Բ. Միլլերի հետազօտութիւնները, սակայն, ցոյց տուեցին, որ թաթերի զգալի մասը նոյնիսկ թուրքերէն չգիտէր: Բ. Միլլերն արդէն այդ ժամանակ գրում էր, որ, 1922 թ. տուեալներով, մահմեդական թաթերի թիւը 125,000 էր, եւ, իհարկէ, երեք տարում նրանք չէին կարող թրքանալ: 1925 թ. նրա հետազօտութիւնը ընդգրկում է Բաքուի, Ղուբայի, Շամախու նահանգները, որտեղ նա «ի յայտ է բերում» զգալի քանակութեամբ թաթախօս

որը կովկասեան տարածքում ապրող ժողովուրդներին յայտնի էր ամենատարբեր անուններով (վրացիները նրանց կոչում էին «թաթար», դարաչայները՝ «թիւրքլի», «ղաջար», բալկարները՝ «ղաջար», չեչենները՝ «ռեքալօ», աւարները՝ «փաղարալ», «հրամշար», դարգինները՝ «ղաջար», հարաւային Դաղստանում՝ «փաղար», Հայերը՝ «թուրք», ռուսական աղբիւրները՝ «կովկասեան թաթարներ» եւ այլն, իսկ իրենք իրենց անուանում էին կա՛մ «մուսուլման», կա՛մ ըստ խանութիւնների՝ շիրվանցիներ, դարաբաղցիներ, բաքուցիներ, ղուբացիներ եւ այլն՝ համապատասխանաբար Շիրվանի, Ղարաբաղի, Բաքուի, Ղուբայի խանութեան թրքալեզու բնակիչներ, ինչպէս նաեւ՝ իրենց ծագման էթնոցեղային կազմաւորումների անուններով՝ «Ղիւանշիր», «փաղար», «թեքերլու» եւ այլն: Յիշեալ անունների կողքին շարունակում էին գործածուել նաեւ «համշար», «թարաքեամա», «ղլլբաշ» տերմինները: Ադրբեջանի հարաւում զգալի թիւ էին կազմում թալիշները²² եւ քրդերը:

բնակչութիւն, այդ թում ոչ վաղ անցեալում «թաթացած» հայ քրիստոնէական (Б. Миллер, *Таты, их расселение и говоры*, Издание Общества Исследования и Изучения Азербайджана, Баку, 1929):

22 Թալիշներ, ինքնանունը՝ թալիշներ, իրանալեզու ժողովուրդ, որի մի մասն ապրում է ներկայիս Ադրբեջանի հարաւ-արեւելքում, միւս մասը՝ Իրանի հիւսիս-արեւմուտքում: Ադրբեջանի թալիշները հիմնականում շիա մահմեդականներ են, Իրանի թալիշները՝ սուննի: Ներկայիս Ադրբեջանի տարածքում ընդգրկուած շիրվանշաների դէմ Ժ. Գ. Սեֆեան Իրանի ղալբաշների պատերազմների ժամանակ թալիշական ժառանգական ազնուականութիւնը օժանդակում էր շիա ղալբաշներին, ովքեր նրանց ներառեցին ղալբաշական միաւորման մէջ: Թալիշները ղալբաշների միաւորման մէջ միակ ոչ քոչուոր ժողովուրդն էին (И. П. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв.*, Восточный Научно-Исследовательский Институт, Л., 1949): Ժ. Գ. Նադիր շահի իշխանութեան կործանման շրջանում ձեւաւորուեց թալիշական խանութիւն,

Խորհրդային կարգերի հաստատումից եւ Ադրբեջանի խորհրդային հանրապետութեան ձեւաւորումից յետոյ կովկասալեզու էթնիկ միաւորներից աւարների, ախվախների, դարգինների, լեզգիների, ռուսոլիների, ցախուրների մի մասը յայտնուեց Ռուսաստանի կազմում (Դաղստանում), միւս մասը՝ Ադրբեջանի: Այն ժամանակ «թիւրքեր» անունով ճանաչուած ետնագոյն ադրբեջանցիների մի փոքր մասը նոյնպէս յայտնուեց Ռուսաստանի հատուածում՝ Դաղստանի հարաւում: Վերը յիշուած միւս կովկասալեզու էթնիկ միաւորները եւ իրանալեզուները մնացին Ադրբեջանի տարածքում: Այնուհետեւ թուարկուած ժողովուրդների ճանաչուած ընթացքն աւարները ուղիներով, ինչն աւելի խորացաւ ԽՍՀՄ կազմաւորուած միջ եւ Ադրբեջանի անկախ հանրապետութեան ձեւաւորումից յետոյ:

Խորհրդային շրջանում ԽՍՀՄ կազմում յայտնուած Ադրբեջանում սկզբունքօրէն շարունակուեց տեղաբնիկ ոչ թրքալեզու ժողովուրդներին ձուլելու ծրագիրը, սակայն այլեւս հնարաւոր չէր այդ անել նախկինում փորձուած բռնի հաւատափոխութեան եւ լեզուափոխութեան մեթոդով: Դրան փոխարինելու եկան նոր մեթոդներ, մասնաւորապէս՝ դպրոցական կրթութեան միջոցով բոլոր մահմեդականներին թրքալեզուացնելու, մարդահամարների ընթացքում նրանց թիւն արհեստականորէն նուազեցնելու ճանապարհով՝ աստիճանաբար էթնիկ միաւորների ցանկերից հանելու, կրթութեան, տնտեսական զարգացման հնարաւորութիւններին խոչընդոտելու, էթնոմիջակուցային ինքնութեան զարգացմանը խոչընդոտելու եւ այլն: Այս գործընթացին մեծապէս նպաստում էր նաեւ նորարարեւնուած չէր» պատմական անցեալի յիշողութիւններով, սկզբնական շրջանում

որը 1828 թ., որպէս ինքնուրոյն միաւոր, միացաւ ռուսական կայսրութեանը:

էթնիկ բովանդակութիւն չէր կրում, եւ սկզբունքօրէն այդ տերմինի օգտագործումը, էթնիկական նոյնականացման վտանգ չներկայացնելով, ձուլման սպառնալիք չէր պարունակում: Տեւական ժամանակ նոյնիսկ ետնագոյն ադրբեջանցիներն իրենք իրենց չէին նոյնականացնում «ադրբեջանցի» էթնանուն հետ: 1926-թ. մարդահամարի նիւթերում նրանք ներկայացուած էին «թիւրքեր» տերմինով²³, որոնց օսման թուրքերից տարբերելու համար նոյն մարդահամարի նիւթերում օգտագործուած է նաեւ «օսմանեան թուրքեր» եզրը: Այս ամէնի հետեւանքով «ադրբեջանցի» ընդհանրացումն ընկալման համար յետագայում աննկատ էր դարձնում տերմինի էթնիկացումը, յատկապէս եթէ նկատի ունենանք, որ «թիւրքերն» իրենք իրենց ընդհուպ մինչեւ 80-ական թուականները (զգալիորէն նաեւ մինչեւ այսօր) սովորաբար անուանում էին պարզապէս «մուսուլման»: Թիւրք-ադրբեջանցիների «ադրբեջանական էթնիկացմանը» զուգահեռ Ադրբեջանի բազմաթիւ տեղաբնիկ ժողովուրդները, առնուազն պաշտօնական տուեալներով, սկսում են նուազել, իսկ «ադրբեջանցիները» չլսուած արագութեամբ «անել»²⁴: Տեսնենք ազգային խմբերի դինամիկան ըստ խորհրդային պաշտօնական մարդահամարների նիւթերի:

23 Այնուհետեւ ԽՍՀՄ բոլոր մարդահամարների միջոցով «թիւրք» տերմինին փոխարինում է «ադրբեջանցի» տերմինը:

24 Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Խարатян, *Проблемы этнического выживания в Азербайджане* (1), <http://www.kavkazoved.info/news/2011/12/26/problemy-etnicheskogo-vyzhivaniya-v-azerba-jdzhan-i.html>: «Судя по материалам, в период от 1999 по 2009 год общая численность населения Азербайджана увеличилась на 96900 человек (в 1999 было 7953400, в 2009 стало 8922400), причем количество одних только азербайджанцев увеличилось на 967.300 человек (в 1999 было 7.205 500, в 2009 стало 8.172,800):»

Առաջին՝ 1926 թ. մարդահամարի տուեալներով՝ «աղբբեջանցիների» (թիւրքեր) թիւն Աղբբեջանում կազմել է 1,437,977 մարդ, ոչ աղբբեջանցիների թիւը՝ 832,083 մարդ, իսկ խորհրդային վերջին՝ 1989 թ. մարդահամարի տուեալներով աղբբեջանցիների թիւը կազմել է 5,804,980 մարդ, ոչ աղբբեջանցիների թիւը՝ 1,216,198 մարդ, այլ կերպ ասած՝ աղբբեջանցիներն աւելացել են 4 անգամ, ոչ աղբբեջանցիները՝ 1,4 անգամ: Այս պարագան ինքնին ուշագրաւ է, եթէ հաշուի առնենք նաեւ, որ խորհրդային տարիներին Աղբբեջան են ներգաղթել նորանոր «ոչ աղբբեջանցիներ», մասնաւորապէս՝ զգալի քանակութեամբ սլաւոնալեզու (յատկապէս՝ ռուս) բնակչութիւն:

1939 թ. մարդահամարի նիւթերի համաձայն՝ չնայած աղբբեջանցիների թիւն աճել է 4324.94 մարդով, այնուամենայնիւ բնակչութեան ընդհանուր կազմում աղբբեջանցիների տոկոսը նուազել է՝ մինչեւ հանրապետութեան ամբողջ բնակչութեան 58,3%-ը, համապատասխանաբար այլազգիները կազմում էին բնակչութեան 41,7%: 1926 թ. եւ 1939 թ. մարդահամարների նիւթերի համեմատութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ այլազգիների թուաքանակի/աճն այդ տարիներին բաժին էր ընկնում հիմնականում ռուսներին (աւելացել է 307,773 ռուս, եւ ռուսների ընդհանուր թիւը հասել է 528,318 մարդու), հայերին (աւելացել է 106,021 հայ) եւ լեզգիներին (աւելացել է 74,403 լեզգի):

Համեմատութեան համար ասենք, որ նոյն տարիներին, կրկին ըստ պաշտօնական մարդահամարների նիւթերի, բնակչութեան ընդհանուր թուաքանակում նուազել է նաեւ վրացիների տոկոսը՝ Վրաստանում (80%-ից հասնելով 61,4%-ի), եւ հայերինը՝ Հայաստանում (84,5%-ից հասնելով 82,8%-ի): Վրաստանում այդ տարիներին վրացիներից գատ արձանագրուել է հիմնականում ռուսներին, աղբբեջանցիների եւ

հայերի թուաքանակի՝ աճ, իսկ Հայաստանում՝ հիմնականում աղբբեջանցիների թուաքանակի աճ:

1939 թ. յետոյ մինչեւ 1989 թ. Այսրկովկասի երեք հանրապետութիւններում էլ այլազգիների տոկոսային յարաբերակցութիւնը նուազել է, ամենաքիչը՝ Վրաստանում, 8,7%-ով: Հայաստանում այդ յիսուն տարիների ընթացքում այլազգիները նուազել են 9,5%-ով, իսկ Աղբբեջանում՝ 24,3%-ով: Արդիւնքում՝ միայն քսաներորդ դարի յիսուն տարուայ ընթացքում՝ 1939 թ.-ից մինչեւ խորհրդային վերջին՝ 1989 թ. մարդահամարը, Աղբբեջանում աղբբեջանցիների թիւը, պաշտօնական տուեալներով, 58,3%-ից աճել է մինչեւ 82,6%, իսկ այլազգիների թիւը համապատասխանաբար 41,7%-ից նուազելով հասել է 17,4%-ի:

Համեմատութեան համար ասենք, որ նոյն տարիներին, կրկին ըստ պաշտօնական մարդահամարների նիւթերի, Վրաստանում վրացիների յարաբերակցութիւնը բնակչութեան թուաքանակում նուազել է՝ 80%-ից հասնելով 70,1 %-ի, իսկ Հայաստանում, չնայած երեսնական, քառասնական, վաթննական թուականների աճուելի հայրենադարձութեանը եւ աղբբեջանահայերի շարունակական ներգաղթին, հայերի թիւը 84,5%-ից աճել է միայն մինչեւ 93,3%: Սակայն Վրաստանում եւ Հայաստանում աճել են այլազգիների բացարձակ թուաքանակները, 85,802 մարդով՝ Հայաստանում, 1,084,903 մարդով՝ Վրաստանում, իսկ Աղբբեջանում նուազել է նաեւ նրանց բացարձակ թիւը՝ 118,481 մարդով: Քանի որ 1989 թ. էթնիկ տեղաշարժերի հետեւանքով ժողովրդագրական տուեալները խնդրայարոյց են երեք հանրապետութիւններում էլ, ապա փաստենք, որ Աղբբեջանում այլազգիների թիւ՝ տոկոսային յարաբերակցութիւնը, թէ՛ բացարձակ թիւը 1939 թ. յետոյ շարունակ ունեցել է նուազման

միտում, իսկ Հայաստանում եւ յատկապէս Վրաստանում՝ աճի միտում:

Ստորեւ երեք աղիւսակով ներկայացուում է երեք հանրապետութիւնների «տիտղոսային» եւ «այլազգիների» հանրա-

գումարային թուաքանակների դինամիկան ըստ ԽՍՀՄ մարդահամարների արդիւնքների, բացարձակ թուերով եւ տոկոսային յարաբերակցութեամբ:

Աղիւսակ 1. Աղբբեջան

Մարդահամարի անցկացման տարեթիւ. Աղբբեջան	Ամբողջ բնակչութիւնը	Աղբբեջացիներ	Այլազգիներ	Աղբբեջացիների տոկոսը	Այլազգիների տոկոսը
1926	2,270,060 /ԽՍՀՄ քաղաքացիներ/	1,437,977 /թիւրքեր/	832,083	63,3%	36,7%
1939	3,205,150	1,870,471	1,334,679	58,3%	41,7%
1959	3,697,717	2,494,381	1,203,336	67,4%	32,6%
1970	5,117,081	3,776,778	1,340,303	73,6%	26,4%
1979	6,026,515	4,708,832	1,317,683	78,1%	21,9%
1989	7,021,178	5,804,980	1,216,198	82,6%	17,4%
1999	7,953,400	7,205,464	747,936	90,5%	9,5%
2009	8,922,400	8,172,800	749,600	91,5%	8,5%

Աղիւսակ 2. Հայաստան

Մարդահամարի անցկացման տարեթիւ. Հայաստան	Ամբողջ բնակչութիւնը	Հայեր	Այլազգիներ	Հայերի տոկոսը	Այլազգիների տոկոսը
1926	878,929/ԽՍՀՄ քաղաքացիներ/	743,571	135,358	84,5%	15,5%
1939	1,282,338	1,061,997	220,341	82,8%	17,2%
1959	1,763,048	1,551,610	211,438	88%	12%
1970	2,491,873	2,208,327	283,546	88,9%	11,1%
1979	3,037,259	2,724,975	312,284	89,7%	10,3%
1989	3,304,776	3,083,616	221,160	93,3%	7,7%

Աղիւսակ 3. Վրաստան

Մարդահամարի անցկացման տարեթիւ. Վրաստան	Ամբողջ բնակչութիւնը	Վրացիներ	Այլազգիներ	Վրացիների տոկոսը	Այլազգիների տոկոսը
1926	2,644,207 /ԽՍՀՄ քաղաքացիներ/	2,115,662	528,545	80%	20%
1939	3,540,023	2,173,922	1,366,101	61,4%	38,6%
1959	4,044,045	2,600,588	1,443,457	64,3%	35,7%
1970	4,686,358	3,130,741	1,555,617	68,9%	31,1%

1979	4,993,182	3,433,011	1,560,171	68,7%	31,3%
1989	5,400,841	3,787,393	1,613,448	70,1%	29,9%

Աղիւսակ 1-ում ներկայացուած են նաեւ անկախ Ադրբեջանի Հանրապետութեան վերջին երկու՝ 1999 թ. եւ 2009 թ. մարդահամարների տուեալները: Ինչպէս կարելի է տեսնել, ադրբեջանցիների թիւն ընդհանուր բնակչութեան մէջ հասել է 91,5%-ի, իսկ այլազգիներին մնացել է ընդամենը 8,5% մասնաբաժինը: Այսպէս, միայն 1999 թ.-ից մինչեւ 2009 թ. Ադրբեջանի ընդհանուր բնակչութիւնը, ըստ պաշտօնական մարդահամարների նիւթերի, աճել է 96,900 մարդով (1999 թ. եղել է 7,953,400 մարդ, 2009 թ. դարձել է 8,922,400 մարդ), ընդ որում՝ միայն «ադրբեջանցիների» թիւն աճել է 967,300 մարդով (1999 թ. եղել է 7,205,500, 2009 թ. դարձել է 8,172,800): Եթէ հաւատանք այդ թուերին, տասը տարիների ընթացքում Ադրբեջանի մնացած բոլոր էթնիկ միաւորները միասին աճել են ընդամենը 2,100 մարդով: Մինչդեռ նոյնիսկ պաշտօնական թուերն այլ բան են ասում. թախշներն այդ տասը տարիների ընթացքում աւելացել են 35,200 մարդով (նրանց դիմաց 1999 թ. մարդահամարի նիւթերում գրանցուած է 76,841 թիւը, իսկ 2009-ին՝ 112,000), թախերը՝ 14,300 մարդով (համապատասխանաբար՝ 10,900 եւ 25,200): Պաշտօնական մարդահամարի ցուցակներում վերջապէս յայտնուել են նախորդ մարդահամարների ցուցակներից անհետացած խինալուդները (2,200 մարդ) եւ կրիդները (4,400 մարդ): Ընդամենը 2,300 մարդով աւելացել է նաեւ լեզգիների թիւը (1999 թ. ցոյց է տրուած 178,000 թիւը, իսկ 2009 թ.՝ 180,300): Արդիւնքում՝ 1999-2009 թթ. ընթացքում Ադրբեջանի ընդհանուր բնակչութեան թուաքանակի աճում միայն հինգ ժողովուրդների ցուցանիշներով 56,200 մարդ է մասնակցել, ինչը ոչ մի կերպ չի տեղաւորուում 2,100 թուի մէջ:

Սկզբունքորէն նոյն պատկերն է նախորդող մարդահամարի պաշտօնական տուեալներում: Պարզուում է, որ 1989-1999 թթ. ընթացքում, ըստ երկրի պաշտօնական մարդահամարի նիւթերի, Ադրբեջանի ընդհանուր բնակչութիւնն աւելացել է 932,222 մարդով (1989 թ. եղել է 7,021,178 մարդ, 1999 թ. դարձել է 7,953,400), սակայն միայն «ադրբեջանցիների» թիւն աւելացել է ամբողջ 1,400,484 մարդով (1989 թ. Ադրբեջանում եղել է 5,804,980 ադրբեջանցի, 1999 թ. ադրբեջանցիների թիւը դարձել է 7,205,464 մարդ, այսինքն՝ երկրի ընդհանուր բնակչութեան աճից համարեա 0,5 միլիոնով աւել): Եթէ նոյնիսկ այդ ընթացքում Ադրբեջանի բոլոր այլազգիները երկրից դնային, մահանային, անհետանային..., ադրբեջանցիների աճը կը լինէր միայն այնքան, որքան երկրի ընդհանուր բնակչութեան աճն է: Երկրի ընդհանուր բնակչութեան աճից ադրբեջանցիների թուաքանակի աճը աւել կարող է լինել միայն մէկ դէպքում՝ եթէ Ադրբեջանի այլազգի բնակչութիւնը որոշէր մարդահամարի ժամանակ իր ազգային պատկանելութիւնը գրանցել որպէս «ադրբեջանցի», ինչով, բնականաբար, կը նուազէր այլազգիների թիւը:

Էթնիկ ադրբեջանցիների թուաքանակի գերազանցումը բնակչութեան ընդհանուր թուաքանակի աճին բնորոշ է ադրբեջանական պաշտօնական բոլոր մարդահամարների տուեալներին: Օրինակ՝ 1939 թուականից մինչեւ 1970 թուականը Ադրբեջանի ընդհանուր բնակչութիւնն աւելացել է 1,911,931 մարդով, իսկ ադրբեջանցիների թիւն այդ նոյն ժամանակահատուածում աւելացել է 1,906,307 մարդով՝ Ադրբեջանի մնացած բոլոր ժողովուրդներին բաժին թողնելով ընդամենը... 5,624 մարդ:

Ուշագրաւ է, որ ադրբեջանցիներն այդ արդիւնքը ձեռք են բերել 1939 թ. ելակետային 1,870,470 թուաքանակից: Ստացուում է, որ այդ ընթացքում ադրբեջանցիների թուաքանակն աճել է ամբողջ 201,9%-ով: Սա այն դէպքում, երբ սոցիալ-տնտեսական ծանր շրջան էր, դեռեւս նորմալ առողջապահութիւն չկար, 1941-45 թթ. պատերազմական ծանր տարիներն էին եւ այլն:

Ադրբեջանում ադրբեջանցիների թէ՛ բացարձակ թուաքանակի, թէ՛ հանրապետութեան բնակչութեան ընդհանուր կազմում տոկոսային յարաբերակցութեան կտրուկ աճի բացատրութիւնն ակնյայտօրէն մահմեդական բնակչութեան պարզ բնական աճի ցուցանիշները չեն, քանի որ Ադրբեջանում տեղաբնիկ կովկասալեզու եւ իրանալեզու բնակչութիւնը նոյնպէս մահմեդական է, բոլոր խմբերում էլ ծնելիութիւնը համամասն է, սակայն նրանց թուաքանակը

նոյն մարդահամարների տուեալներով զգալի անկում է ունեցել: Միաժամանակ ուշագրաւ է, որ կովկասալեզու այն ժողովուրդները, որոնց մի մասն ապրում է Ադրբեջանում, միւս մասը՝ Դաղստանում, նոյն տարիներին զարմանալիօրէն տարբեր ժողովրդագրական զարգացումներ են ունեցել. Ադրբեջանում նրանց թուաքանակը նուազել է, Դաղստանում՝ աճել, չնայած Ադրբեջանից Դաղստան նրանք չեն տեղափոխուել: Աւելին, արտահոսք եղել է Դաղստանից, որտեղ ապրողների մի մասը ժամանակի ընթացքում հաստատուել է Ռուսաստանի Դաշնութեան այլ տարածքներում: Միաժամանակ թէ՛ Ադրբեջանում, թէ՛ Դաղստանում աճել է ադրբեջանցիների թիւը: Ստորեւ աղիւսակով ներկայացուում է Ադրբեջանի եւ Ռուսաստանի (Դաղստանի) միջեւ «կիսուած» ժողովուրդների թուաքանակների դինամիկան Դաղստանում ըստ պաշտօնական մարդահամարների նիւթերի:

Աղիւսակ 4

Ռուսաստան/ Դաղստանի ԻՉ	1926 թ.	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1989 թ.
Ադրբեջանցիներ (թիւրքեր)	23,428	43,123	70,947	95,689/ 54,403	152,421/ 64,514	335,889/ 75,463
Ռուսուներ	10,333	-	6,703	11,904/ 11,799	14,835/ 14,288	19,503/ 14,955
Աւարներ	138,749/ 176,335	235,722	249,529	361,613/ 349,304	438,306/ 418,634	544,016/ 496,077
Լեզգիներ		100,417	114,210	170,494/ 162,721	202,854/ 188,804	257,270/ 204,370
Ցախուրներ	3,531	-	4,437	4,730/ 4,309	4,774/ 4,560	6,492/ 5,194

Քանի որ խորհրդային տարիներին, Հայերից բացի, Ադրբեջանից զգալի թուով արտագաղթողներ չեն եղել, կասկածից վեր է, որ գործ ունենք թուերի խարդախութեան հետ (տեղաբնիկ էթնիկ միաւորների թուաքանակի մի մասն ադրբեջանցիներին «նուիրելու» միջոցով արհեստականօրէն նուազ ցոյց տալ այդ ժողովուրդների թիւը, եւ յաւելածով ուռճացնել միւսի՝ ադրբեջանցիների թիւը)²⁵:

25 Марко Шахбанов, Дагестанцы и чуждеса азербайджанской статистики, <http://regnum.ru/news/poliit/1458816.html>; Г. Харатян, Проблемы этнического выживания в Азербайджане, <http://www.kavkazoved.info/news/2011/12/26/problemy-etnicheskogo-vyzhivaniya-v-azerbajdzhane-i.html>; Արա Մարջանեան, Ադրբեջանական հանրապետությունում...

Ամէն ինչից բացի, այս ամէնի ետեւում նաեւ այս կամ այն ժողովրդի համար զարգացման համապատասխան միջոցների յատկացումն էր (ինչքան մեծ թիւ, այնքան շատ նիւթական միջոցներ): Սակայն ամենակարեւոր խնդիրն, անկասկած, քաղաքական էր՝ «ազգայնացնել» Ադրբեջանը ի հաշիւ որոշ «այլազգիներին»: Խնդիրն ահա այս «որոշ» տերմինի մէջ է. ո՞ր «այլազգիներին» ներկայութիւնն էր ներդրութիւն պատճառում Ադրբեջանին:

Մարդահամարի նիւթերը վկայում են, որ.

ա) «Ազգերի ցուցակից» բացակայում էին իրենց հայրենիքում ներկայիս Ադրբեջանի տարածքում հազարամեակներ շարունակ ապրած այն ժողովուրդները, ում ներկայացուցիչները բացառապէս Ադրբեջանի Հանրապետութիւնում էին եւ չկար երրորդ կողմ, որը բարձրաձայնէր այդ ժողովուրդների արհեստական «բացակայութեան» խնդիրը: Այսպէս, 1926 թ. մարդահամարի նիւթերից ամբողջովին դուրս են մնացել կովկասալեզու հափութիները, կրիզները, ալիկները, երգիւղները, ախվախները, դարգիները: 1939 թ. մարդահամարի տուեալներով կրկին իսպառ բացակայում են հափութիները, կրիզները, ալիկները, երգիւղները, բայց նրանց աւելացել են ջեկերը, խինալուղները, բուզուղները եւ ուղիները, այսինքն՝ այն ժողովուրդները, ովքեր «Դաղստանում մաս չունէին» եւ ամենեւին պաշտպանուած չէին որեւէ վերահսկողութեամբ: 1959 թ. մարդահամարի նիւթերով կրիզները եւ ուղիները «վերադարձել» են Ադրբեջանում ապրող ժողովուրդների ցուցակ, սակայն հափութիները, ջեկերը, խինալուղները, բուզուղները, ալիկները, երգիւղները կրկին «մոռացուել են»: 1970 թ. մարդահամարի տուեալներով միայն Ադրբեջանի տարած-

քում ապրող կովկասալեզու ժողովուրդներից «յիշուելու» պատիւը վերապահուել է ուղիներին, միւսները «դադարել են գոյութիւն ունենալ», եւ տեղաբնիկ կովկասալեզու ժողովուրդներից զրանցուած են բացառապէս Ռուսաստանի (Դաղստանի) հետ «կիսուած» ժողովուրդները՝ աւարներ, աղուլներ, դարգիներ, լաքեր, լեզգիներ, ռուտուլներ, թաբասարանցիներ, ցախուրներ: Տեղաբնիկ կովկասալեզու ժողովուրդների պատկերը նոյնն է նաեւ 1979 թ. եւ 1989 թ. մարդահամարների ցուցակներում: Այսպիսով «այլազգիներ» տերմինի բաղկացուցիչ տեղաբնիկ կովկասալեզուներից աստիճանաբար դուրս են մղուել այն ժողովուրդները, ովքեր իրենց հայրենիքում դժբախտութիւն են ունեցել գոյատեւելու առնուազն երկու հազարամեակ՝ պատմական Կովկասեան Աղուանքի ժամանակներից մինչեւ մեր օրերը, բայց յետագայում մնացել են բացառապէս Խորհրդային Ադրբեջանի վարչաքաղաքական տարածքում: Ճիշտ է, յիշեալ ժողովուրդները վերջին հազարամեակում մեծ կորուստներ են ունեցել եւ զգալիորէն փոքրաթիւ են, երբեմն՝ ընդամէնը երկու-երեք հազար մարդ, սակայն նրանց «բացակայութիւնը» ոչ մի կերպ չի կարող թուաքանակով բացատրուել: Ադրբեջանական մարդահամարներում ներառուած են բազմաթիւ սակաւթիւ ժողովուրդների անուններ եւ նրանց թուաքանակի դինամիկան: Օրինակ՝ մուղովացիները, շուէզները, Ֆինները, Ֆրանսիացիները, սամոեզները, ճապոնացիները, ոյգուրները եւ այլն: Յիշեալ, ինչպէս նաեւ այլ բազմաթիւ «այլազգիներ», եթէ նոյնիսկ նրանցից ընդամէնը մէկ մարդ է եղել Ադրբեջանում, պաշտօնական մարդահամարի հաշուարկներում արտացոլուած են (օրինակ՝ 1926 թ. մարդահամարի ժամանակ գրանցուել է 2 սամոեզ, 1 ճապոնացի, 1 ոյգուր եւ այլն, յաջորդ՝ 1939 թ. մարդահամարի տուեալներով՝ ճապոնացի՝ 1, ոյգուրներ՝ 2 մարդ, իսկ 1959 թ.

տութիւն. «Վիրտուալ» ժողովրդագրութեան առանձնայատկութիւնները, Երևան, 2012:

մարդահամարն արդէն գրանցել է 2 ճապոնացի եւ ամբողջ 16 ոյգուր): Այլ կերպ ասած՝ մէկ, երկու, երեք... տասը, քսան, երեսուն... մարդով Ադրբեջանում առկայ որոշ ազգեր մարդահամարից մարդահամար միշտ յիշատակուել են, իսկ ահա իրենց հայրենիքում հազար, երկու հազար եւ աւելի թիւ ունեցող էթնիկ միաւորները դուրս են մղուել Ադրբեջանի էթնիկ ցանկերից: Ակնյայտ է, որ պաշտօնական մարդահամարներում ներկայացուող ժողովուրդների ցանկը շատ լուրջ ընտրոյթ է անցել:

բ) Տեղաբնիկ կովկասալեզու այն էթնիկ միաւորները, որոնք «կիսուած էին» Ադրբեջանի եւ Ռուսաստանի (Դաղստանի) միջեւ, մարդահամարից մարդահամար «նուազում էին»:

Այսպէս, 1926 թ. մարդահամարի տուեալներով՝ բոլոր կովկասալեզուները միասին ներկայացուած են Հանրապետամարային 75,379 մարդ թուով: 1939 թ. նրանց թուաքանակը կտրուկ աճում է՝ 135,524 մարդ, հիմնականում լեզգիների հաշուին (1926 թ. 37,263 մարդուց 1939 թ. հասնելով 111,666 մարդու): Սակայն յաջորդ 1959 թ. մարդահամարին յիշուելու արժանացած «կովկասալեզուներն» արդէն սկսում են նուազել՝ բոլորը միասին կազմելով 124,827 մարդ, որից միայն լեզգիները՝ 98,211 մարդ: 1970 թ. լեզգիների թիւը կրկին աճում է՝ 98,211-ից դառնալով 137,250, համապատասխանաբար աճում է բոլոր կովկասալեզուների թիւը՝ 182,537: Այնուհետեւ յաջորդ մարդահամարներին Այնուհետեւ յաջորդ մարդահամարներին լեզգիների համար միշտ որոշ, փոքր աճ է ցոյց տրուած (մէկուկէս-երկու հազար մարդու չափով), ինչը համապատասխանաբար ազդել է նաեւ կովկասալեզուների ընդհանուր թուաքանակի վրայ (1979 թ.՝ 158,057 լեզգի, 210,915 բոլոր կովկասալե-

զուները, 1989 թ.՝ 171,395 լեզգի, 239,182 բոլոր կովկասալեզուները)²⁶:

Պաշտօնական մարդահամարի նոյն տրամաբանութիւնն է աշխատում նաեւ Ադրբեջանի տարածքի միւս տեղաբնիկների՝ իրանալեզուների (գլխաւորապէս՝ թաթեր, թալիշներ, քրդեր) դէպքում. նրանք նոյնպէս մարդահամարի ժողովուրդների ցանկից մե՛րթ անհետանում, մե՛րթ յայտնուում են, նրանց թէ՛ առանձին-առանձին, թէ՛ Հանրապետամարային թիւը նոյնպէս զգալիորէն նուազում է: 1939 թ. մարդահամարի ցուցակներում չկան թալիշները, 1959 թ. նրանք յայտնուում են, սակայն կրկին անհետանում են 1970, 1979 թթ., որպէսզի յայտնուեն 1989 թ.: Նրանց թուաքանակների՝ նուազման արդիւնքում վաթսուս տարուայ ընթացքում Ադրբեջանում 1926 թ. պաշտօնական մարդահամարի 157,429 իրանալեզուներից 1989 թ. մնում է միայն 29,8%-ը՝ 47,014 մարդ²⁷: Իրենք՝ թաթերն ու թալիշներն իրենց թուաքանակն Ադրբեջանում համարում են համապատասխանաբար մէկուկէս միլիոն եւ մէկ միլիոն մարդ²⁸, իսկ ադրբեջանցի անկախ փորձագէտը գտնում է, որ այսօրուայ Ադրբեջանում հաւանաբար կայ 200-250 հազար թալիշ²⁹:

Իրավիճակը տարբեր է միայն օսմանեան թուրքերի եւ թաթարների դեպքում.

26 Ст'я Гаети Марко Шахбанов, Дагестанцы и чыдека азербайджанской статистики:
 27 1886 թ. ռուսական կայսրութիւնում ապրող ժողովուրդների ցուցակում թալիշների թիւը 50,510 էր. տե՛ս /http://www.demoscope.ru/weekly/2005/0187/perep04.php/:
 28 http://atropat.narod.ru/zoa.html: Մրանք, հաւանաբար, չափազանցում թուրք եւ: Սակայն, հաշուի առնելով թուրք-ադրբեջանցիների մէջ ձուլման աստիճանը, հաւանական է ենթադրել, որ վերջին երկու հարիւր տարուայ ընթացքում թաթարական եւ թալիշական ինքնութիւնը կորցրած թաթերը եւ թալիշները իսկապէս կարող էին այդպիսի թուաքանակ ունենալ:
 29 http://www.iea.ras.ru/topic/census/mon/yunus_mon2001.htm

այստեղ մենք միայն աճի միտում ենք տեսնում: Ստորեւ աղիւսակով ներկայացւում է կովկասալեզու, իրանալեզու եւ թրքալեզու ժողովուրդների թուաքանակի դինամիկան Ադրբեջանում ըստ պաշտօնական մարդահամարների արդիւնքների:

Ակնյայտ է, որ Ադրբեջանի «այլագրիները» կովկասալեզուներն ու իրանալեզուները իրենց հայրենիքում անշեղօրէն նուազել են, իսկ թրքալեզուները՝ աճել: Առաջին հայեացքից տարօրինակ այս պատկերը (տարօրինակ՝ առնուազն երկու պատճառով. ա) կովկասալեզուներն ու ի-

րանալեզուներն իրենց հայրենիքում էին, որտեղ սովորաբար այլոց մէջ ուծացումը խիստ հազուադէպ է լինում, եւ դրա բարդութիւնները շատ են, բ) որովհետեւ թրքալեզու ադրբեջանցիների հետ ձուլուելու աւելի մեծ հաւանականութիւն ունէին թրքալեզու ժողովուրդները) միանգամայն տրամաբանական էր Ադրբեջանի ազգային քաղաքականութեան համատեքստում. երկրի ազգային քաղաքականութիւնն ուղղուած էր իրենց հայրենիքում ապրողների դէմ:

Աղիւսակ 5. Կովկասալեզու, իրանալեզու, թրքալեզու ժողովուրդների թուաքանակի դինամիկան Ադրբեջանում ըստ պաշտօնական մարդահամարների ցուցանիշների

Մարդահամարի անցկացման տարեթիւ	Կովկասալեզուներ	Իրանալեզուներ	Թրքալեզուներ / օսմանեան թուրքեր, թաթարներ
1926	75,379	157,429 (թաթեր, թալիշներ, քրդեր, օսեր, պարսիկներ)	13,253
1939	135,524	96,215 (օսեր, թալիշներ, քրդեր)	28,191
1959	124,827	10,331 (թալիշներ, թաթեր, տաշիկներ, օսեր, իրանցիներ, քրդեր)	29,754
1970	182,537	16,288 (թաթեր, տաշիկներ, օսեր, քրդեր, պարսիկներ)	31,637
1979	210,915	17,456 (թաթեր, տաշիկներ, քրդեր, պարսիկներ, օսեր)	39,276
1989	239,182	47,014 (թալիշներ, թաթեր, տաշիկներ, օսեր, քրդեր, պարսիկներ)	46,269

Ինչու եւ Ադրբեջանում անցանկալի կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդները

Այս հարցի պատասխանը պարզունակութեան աստիճան յստակ է: Որովհետեւ՝

ա) նրանք այդ երկրի պատմականօրէն տեղաբնիկ ժողովուրդներն են, իսկ ադրբեջանցիների ինքնութեան մէջ մինչեւ այսօր ամուր նստած է իրենց եկուորու-

թեան խնդիրը: Խորհրդային պատմագրութիւնը որեւէ տարածքում ժողովրդի «քաղաքական իրաւունքը» ընկալում էր այդ տարածքում նրանց պատմականութեան համատեքստում, եւ ադրբեջանցիները միշտ տազնապ ունէին Ադրբեջանում իրենց «պատմականութեան» նկատմամբ,

բ) նրանց ինքնութիւնը խիստ յստակ է, այդ ինքնութիւնը պատմական է, նրանց պատմական յիշողութիւնը «կովկասեան է», իսկ ադրբեջանցիների ինքնութիւնը

ձեւաւորման փուլում է, երկատուած-եռատուած է (իրանական-կովկասեան-թուրքական), նրանց ինքնութեան «պատմական կոնտեքստը» եւ նրանց հաւաքական ինքնութեան ձեւաւորման գործընթացը փոփոխական են եւ զգալիօրէն կախուած փոփոխական են եւ զգալիօրէն կախուած քաղաքական կոնիկտուրայից: Այս ամէնի հետեւանքով ողջ անցեալ հարիւրամեակում եւ հէնց այսօր առկայ է ադրբեջանցիների էթնիկ ինքնութեան շարունակուող ճգնաժամ: Ադրբեջանցիների պատմական յիշողութիւնը մի կողմից ուղղակիօրէն կապուած է նրանց ինքնութեան ընթացիկ ձեւաւորումից, միւս կողմից՝ այդ յիշողութեան պատմական խորքը եւ աշխարհային պատմական խորքը չեն: Ադրբեջրական տարածքը յստակ չեն: Ադրբեջանցիների թրքական ծագման տեսակէտի կողմնակիցների մի մասը թրքական պատմականութեան ժամկէտը սահմանում է Ժ. Ժ. զ. զ., աշխարհագրական տարածքը՝ Կովկաս եւ Իրանի հիւսիս, միւս մասը՝ Կովկաս-Առաջաւոր Ասիա՝ Բ. ա. III-II հազարամեակից, կովկասեան ծագման կողմնակիցների մի մասը ադրբեջանցիների էթնիկական պատմականութիւնը կովկասում ուղղակիօրէն կապում է կովկասեան Աղուանքի հետ եւ այլն: Այս մտեցումների տարբերութիւններն արձագանքում են ադրբեջանցիների հանրային գիտակցութեան մէջ եւ ինքնութեան փնտրտուքում հակադրում են ներկայիս Ադրբեջանի տեղաբնիկ կովկասալեզու եւ իրանալեզու էթնիկ միաւորների կովկասեան պատմականութեան բանաւոր յիշողութեանը եւ ադրբեջանցիների տեղեկութիւններին՝ ադրբեջանցիների պատմական առճակատում առաջացնելով «պատմական իրաւունքների» պատկերացումներում,

գ) Ի. դարի ընթացքում «թրքալեզու ադրբեջանցիներն» Ադրբեջանում իրականութեամբ քանակապէս գիշում էին տեղաբնիկների՝ կովկասալեզուների, իրանալեզուների եւ հայերի հանրագումարային թուաքանակին, եւ սրա ու իրենց ինքնութեան

լղղուածութեան հետեւանքով ունէին էթնիկական բարդոյթ,

դ) Ադրբեջանի տարածքի քանակապէս մեծաթիւ կովկասալեզու ժողովուրդները կիսուած էին Ռուսաստանի/Դաղստանի հետ, իսկ իրանալեզու թալիշները՝ Իրանի հետ: Ադրբեջանի ողջ տարածքում էթնիկապէս թելադրող լինելու ադրբեջանական քաղաքական ծրագրում միշտ խոչընդոտ էր թուում նրանց միաւորման քաղաքական ծրագրերի հնարաւորութիւնը, ուստի ադրբեջանցիների քաղաքական ծրագրի մասն էր Ադրբեջանում նրանց թուաքանակի նուազեցումը: Արտամղմանը եւ ձուլմանը համընթաց այդ ճանապարհներից մէկն էլ նրանց թուաքանակների արհեստական նուազեցումն էր,

ե) խորհրդային շրջանում աստիճանաբար ձեւաւորուող եւ հասունացող ադրբեջանական պատմագրութեան կոնցեպցիան մի կողմից թրքալեզու «ադրբեջանցիների» էթնիկացման դժուար ընթացող բարդ խնդրի, միւս կողմից՝ Ադրբեջանում թրքալեզուների քաղաքական իշխանութեան իրաւունքի բացատրութեան կարիքն ունէր,

զ) տեղաբնիկ էթնիկ միաւորների թուաքանակների արհեստական նուազեցման միջոցով արհեստականօրէն աւելանում էր «թրքալեզու ադրբեջանցիների» թուաքանակը, ինչը մի կողմից «հիմնաւորում էր» ադրբեջանցիների քաղաքական գերիշխանութեան իրաւունքը, միւս կողմից՝ նուազեցնում փոքրաքանակ էթնիկ միաւորների պատմա-մշակութային եւ քաղաքական հնարաւոր յաւակնութիւնները:

Իրականում Ադրբեջանի կովկասալեզու եւ իրանալեզու բոլոր ժողովուրդները, բացի, թերեւս, քրդերի զգալի մասից, ովքեր միւսներից աւելի են «ադրբեջանացի», շարունակում են ապրել իրենց էթնիկական ինքնագիտակցութեամբ, իսկ նրանցից շատերը՝ նաեւ սոցիալական ցան-

ցերով: Յայտնի է, որ Ադրբեջանում թաթերն, օրինակ, մի շարք խմբաւորումներով, փաստացի կլաններով մեծ ազդեցութիւն ունեն երկրի տնտեսական եւ, թեւեւ, նաեւ քաղաքական գործընթացների վրայ, թալիշներն ու լեզգիները ձգտում են ազգային վարչական-պետական որեւէ մակարդակի, ցախուրները մեծ ջանքեր են գործադրում իրենց էթնոսոցիալական ինքնութիւնը պահպանելու համար, լեզգիները եւ աւարները խիստ դժգոհում են Ադրբեջանի ընթացիկ կեանքին իրենց մասնակցութեան անհնարինութիւնից, իսկ ուղիների կախեալութիւնը ադրբեջանական քաղաքական կոնիւկտուրայից երկակի է. մի դէպքում՝ նրանք ներկայացնում են որպէս ադրբեջանական միաւորի նախահայր բաղադրիչ, այլ դէպքում՝ որպէս հայերի կցորդ. տարբեր իրավիճակներում ուղիների նկատմամբ վերաբերմունքը տարբեր է:

Ադրբեջանական էթնիկական ինքնութեան ձեւաւորման բարդութիւնները եւ առկա ճգնաժամը

Խորհրդայնացման առաջին տարիներին ադրբեջանական պատմագրութիւնը չէր ձեւաւորուել եւ անցեալի խնդիրներին միտուած ադրբեջանական «քաղաքական պատուէրը» յստակ չէր: Ադրբեջանի թրքալեզուների վերխմբային (խմբայինը երեք տարբերակ ունէր՝ ա) ցեղային՝ կենգերլու, թեքերլու, շիւանշիր, փադար եւ այլն, բ) վարչատարածքային՝ ըստ խանութիւնների՝ Բաքուի, Ղուբայի, Ղարաբաղի եւ այլն, գ) սոցիալական՝ դաջար, թարաքեամա, դզլբաշ եւ այլն) ինքնութիւնը «թուրքական» միտուածութիւն ունէր, իսկ նրանց հաւաքականութեան համար ընտրուած «ադրբեջանցի» տերմինը լողողած էր, ինքնահաստատուած չէր, եւ այդ տերմինի անցեալի, ներկայի եւ ապագայի գործառոյթը որոշուած չէր: Առհասարակ «ադրբեջանցի» տերմինի «կարիերան» ուշագրաւ սոցիոազգաբանական ե-

րեւոյթներից է: Արտածուած լինելով «Ադրբեջան» երկրի անունից՝ այս տերմինը բնակչութեան մէջ երկար ժամանակ չէր յստականում՝ Ադրբեջանի ողջ բնակչութեանն է վերաբերում, թէ՛ միայն «թրքալեզու մահադականներին»: Հասկանալի չէր նաեւ, թէ «ադրբեջանցի» տերմինը շրջանառութեան մէջ դնողների քաղաքական «պատուէրը» որն է՝ էթնանունը, թէ՛ քաղաքացիութիւնը: Ադրբեջանի ոչ մի էթնոսոցիոլեզու-մշակութային միաւոր իրեն չէր նոյնականացնում «ադրբեջանցի» տերմինի հետ: 1926 թ. հանրապետութիւնը կոչւում էր «Ադրբեջան», բայց մարդահամարի ժողովուրդների ցանկում «ադրբեջանցի» չկար:

«Այդ առիթով Ադրբեջանում շրջանառու է մի պատմութիւն, թէ իբր Ստալինը Ադրբեջանի ԿԿ ղեկավար Մ. Բաղիրովին ասել է. «Եթէ Վրաստանում վրացուհի է, Հայաստանում՝ հայուհի, ինչո՞ւ Ադրբեջանում թրքուհի է»: ... Ենթադրուած էր, որ Ադրբեջանական սոցիալիստական ազգի մէջ պիտի ներառուէին Ադրբեջանի բոլոր մահադական ժողովուրդները, նախ եւ առաջ՝ շիւ ուղղութեան հետեւորդները (թաթերի, թալիշների, քրդերի մեծամասնութիւնը), քանի որ նրանք թուրք-շիւաներին մշակութապէս աւելի մօտ էին եւ ձուլմանը նուազ էին դիմադրում: Մարդահամարների ժամանակ հաշուարարները «ադրբեջանցի» գրանցելու համար յաճախ էին ասում, որ քանի որ մենք ապրում ենք Ադրբեջանում, ուրեմն մենք ադրբեջանցի ենք», - գրում է ազգութեամբ թալիշ Վուզար Ջենգելը³⁰:

Քանի դեռ Ադրբեջանը փաստացի միայն վարչատարածքային միաւորի անուն էր, Ադրբեջանի ամբողջ բնակչութիւ-

30 Вугар Дженгель, *Азербайджанцы: этнос или территорияльная принадлежность?*, <http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-37-51/853-2011-09-01-16-34-23>.

նը տեսականորէն «ադրբեջանցի» էր, եւ դա այս կամ այն չափով ընդունելի էր: Սակայն «ադրբեջանցի» տերմինն աստիճանաբար սկսում է ձեռք բերել էթնանունան գործառոյթը: Դրան մեծապէս նպաստում է նաեւ ադրբեջանական պատմագրութիւնը, որն աստիճանաբար ձեւաւորում էր «ադրբեջանական էթնոսի» տեղաբնակչութեան գաղափարի հիմնաւորման ուղղութեամբ, եւ 50-60-ական թթ. արդէն յստակ ուղղորդում էր Ադրբեջանի տարածքի «ադրբեջանական պատմական իւրացմանը»: Սակայն տեղաբնիկ կովկասաբնակները՝ «ադրբեջանական պատմական իւրացմանը»: Սակայն տեղաբնիկ կովկասաբնակները (նաեւ, իհարկէ, հայերի) առկայութիւնը սկսում էր աւելի ու աւելի խանգարել հայեցակարգի կայացմանը՝ կասկածելի դարձնելով այդ տարածքում թրքալեզու «ադրբեջանական անցեալը»: Նոյն տարիներին, կոնկրետ՝ 1956 թ., Ադրբեջանի Հանրապետութեան սահմանադրութիւնը, հետեւելով Հայաստանի եւ Վրաստանի սահմանադրութիւններին, «ադրբեջանցիները» ճանաչեց պետական լեզու: Դրանով իրաւահանգիստ ադրբեջանցիները «կտրուեց» թուրքերէնից: Այնուհետեւ «ադրբեջանցի» տերմինը յստակորէն ձեւաւորում էր որպէս էթնանուն: Դրան էապէս նպաստում էր այն հանգամանքը, որ առաջին անգամ էր այն հանգամանքը, որ առաջին անգամ շարադրուած էր «Ադրբեջանի պատմութիւնը» դպրոցական դասագիրքը (1960 թ.), որում անշուշտ հիմնաւորում էր թրքալեզու ադրբեջանցիների պատմականութիւնը Ադրբեջանում: Պատմութեան վաղ շրջանի, միջնադարի դէպքերը սկսեցին մատուցուել «Ադրբեջան» անունով, պատմական դերակատարները, մշակութային գործիչները՝ «ադրբեջանցիներ» անունով: Հէնց այդ շրջանում էր, օրինակ, որ իրանալեզու պոէտ Նիզամին յայտարարուեց «ադրբեջանական», որպէս առաջին ադրբեջանցի բանաստեղծ: «Ադրբեջանական թիւրք-ազգայնական մուսաւաթական կուսակցութեան կարկառուն ներկայացուցիչ Մամէդ

էմին Ռասուլզադէն Ադրբեջանի պատմութեանը նուիրուած եւ 1922 թ. Անկարայում հրատարակած ակնարկում ոչ մի բառով չի յիշում Նիզամուն: Նրա համար ադրբեջանական առաջին բանաստեղծը իր ողջ կեանքում ժամանակակից Իրաքի տարածքում ապրած Մուհամմեդ Ֆիզուլին էր (1498-1556)...»³¹: Խորհրդային Ադրբեջանը, սակայն, խնդիր ունէր պատմական արժատներ գցել իր զբաղեցրած տարածքում, եւ, չնայած Նիզամին թուրքերէնով ոչ մի տող չէր գրել, բայց նա ԺԲ դարում ապրել էր ժամանակակից Ադրբեջանի տարածքում...: Նիզամուն ադրբեջանական առաջին բանաստեղծ յայտարարելուն եւ այդ առիթով յրեւեանական փառահեղ միջոցառումներ անցկացնելուն յաջորդում է Մամէդ, էմին Ռասուլզադէի կողմից նոյն Անկարայում 1949 թ. հրատարակուած «գիտական» նոր, խորհրդային ադրբեջանագէտներին գերազանցող տեսութիւնը՝ «Ադրբեջանական բանաստեղծ Նիզամին» վերտառութեամբ. «Չնայած արժատներ գցած կեղծ պատկերացումներին՝ Նիզամին, մեր կարծիքով, ադրբեջանական բանաստեղծ է... Նիզամուն ստեղծագործութիւնների ուսումնասիրութիւնը պարզ ցոյց է տալիս, որ նա հեռու է պարսկական ազգայնականութիւնից, սիրով է լցուած թրքականութեան նկատմամբ, կապուած է Այսրկովկասի միջավայրին եւ պայմաններին, մշտապէս մտահոգուած է երկրի պատմական ճակատագրով եւ քաղաքականութեամբ, եւ նա, իհարկէ, այս իմաստով Ադրբեջանի բանաստեղծ է»³²:

31 Յղում է ըստ Сергей Румянцев, *Советская национальная политика в Закавказье: конструирование национальных границ, историй и культуры* աշխատանքի, <http://www.kavkazoved.info/news/2011/12/24/sovetskaja-nacionalnaja-politika-v-zakavkaze-konstruirovaniye-nacionalnyh-granic-istoriji-i-kultur.html>:

32 Նոյն տեղում:

Չնայած Ադրբեջանի տարածքի «ադրբեջանական պատմության» ադրբեջանցի հեղինակների առաջին սերնդի (Զիյա Բուենեթով, Իգրար Ալիև, Ֆարիդա Մամեդովա) պատմագիտական հայեցակարգով երկրի թրջալեզուացման գործընթացն սկսվել էր ԺԱ. դարում, եւ հէնց այդ ժամանակից պէտք է խօսել ադրբեջանցիների էթնոժազոմնաբանական գործընթացի մասին, սակայն խնդիրը տուեալ դէպքում «ադրբեջանցի» տերմինի յետահայեց ձեռքբերումն էր. այն դառնում էր պատմական անցեալով «ինքնուրոյն էթնանուն» եւ, որպէս այդպիսին, «կլանում էր» տեղաբնիկ կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդների անցեալն ու սպառնում ներկային, քանի որ Ադրբեջանի պատմութիւնը կենտրոնացնում էր բացառապէս էթնանունան յաւակնութեամբ «ադրբեջանցիներին» պատմութեան վրայ: Յետագայում ադրբեջանական պատմագրական «տեղական» հայեցակարգի կողմնակիցների եւ պաշտօնապէս հովանաւորուող տեսութեան ազդեցութեամբ ադրբեջանական մտաւորականութեան մէջ լայնօրէն տարածում է այն ընկալումը, որ «գիտական միջավայրում անառարկելիօրէն հաստատուել է ադրբեջանական էթնոսի՝ որպէս ազգի բարդ էթնո-ժազոմնաբանական ընթացքը, այն է՝ օղուզական (թուրքերէն լեզուի խմբերից մէկը - Հ. Խ.) լեզուի փոքրաթիւ կրողների միաձուլումը տեղաբնիկ ոչ թուրքական բնակչութեան, այդ թւում՝ իրանալեզու եւ կովկասալեզու ժողովուրդների հետ, որոնք ամբողջովին կամ մասնակիօրէն ձուլուել են նոր ազգի մէջ»³³:

Դրան զուգահեռ, 40-ական թուականներից պաշտօնական պատմագրութեան «երկրորդ շերտով» զարգանում էր «Ադր-

բեջանի տարածքի էթնոգենետիկ անընդհատութեան» տեսութիւնը՝ Զ. Ի. Եամպոլսկու գլխաւորութեամբ, որի հիմնական շեշտադրումը պատմութեան ամբողջ ընթացքում Ադրբեջանի տարածքում թուրքական էթնոսի մշտականութեան, տեղաբնիկութեան եւ գերակշռութեան խնդիրն էր³⁴: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի մասնակցութեան եւ Ադրբեջանի՝ Թուրքիայի հետ միաւորման հնարաւոր հեռանկարը պատմագրական հայեցակարգի կարիք ունէր:

Ադրբեջանի պատմութեան եւ ինքնութեան «ադրբեջանացման» ձեւաւորման այդպէս էլ չաւարտուած գործում ահռելի էր Հէյդար Ալիևի ներդրումը, ով յայտնի էր որպէս «ադրբեջանացման» գաղափարի իրական հեղինակ³⁵:

Ադրբեջանական որոշ վերլուծաբաններ չեն թաքցնում, որ թէ՛ պատմութեան հայեցակարգը, թէ՛ «ադրբեջանական» էթնո-ինքնութեան ձեւաւորման գործընթացը յստակ ղեկավարում եւ ուղղորդում էր ադրբեջանական խորհրդային իշխանութիւնների կողմից³⁶: Քանի դեռ Հէյդար Ա-

34 З. М. Ямпольский, Об этногенетической непрерывности на почве Азербайджана, - "Вопросы истории Кавказской Албании", Баку, 1962.
 35 "Гейдар Алиев... считается также главным автором идеологии «азербайджанства». in՝u Сергей Румянцев, Первые исследования и первые специалисты: ситуация в области социальных и гуманитарных наук в постсоветском Азербайджане, <http://www.kavkazoved.info/news/2011/09/22/situacia-v-oblasti-nauk-v-postsovetском-azerbajdzhanе-ii.html>.
 36 Ариф Юнусов, Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана, <http://www.kavkazoved.info/news/2011/10/11/mify-i-obrazy-vraga-v-istoricheskoy-nauke-azerbajdzha-na-i.html>; Сергей Румянцев, Первые исследования и первые специалисты: ситуация в области социальных и гуманитарных наук в постсоветском Азербайджане, ГИИ, Советская национальная политика в Закавказье: конструирование национальных границ, историй и кутур, [33 Фикрин Бекташи, Гайк Котанджян как олицетворение плачевного состояния армянской исторической методологии, <http://www.regnum.ru/news/polit/1435045.html>.](http://www.kavkazoved.info/news/2011/12/24/sovetskaja-nacionalnaja-</p>
</div>
<div data-bbox=)

լիւնն ուղղակիօրէն ղեկավարում էր պատմութեան «ադրբեջանացման» հայեցակարգը, «թուրքական» բաղադրիչը յարաբերականօրէն երկրորդական էր: Այս հայեցակարգի համաձայն՝ առնուազն Ք.յ. առաջին հազարամեակում Ադրբեջանի տարածքի պատմութեան կերտման գործում զգալի ներդրում են ունեցել տեղաբնիկ կովկասալեզու եւ իրանալեզու տարրերը: Այս կամ այն չափով այս հայեցակարգը բաւարարում էր Ադրբեջանում ազգային փոքրամասնութիւններ դարձած կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդներին եւ որոշ չափով ընդունելի էր դարձնում «ադրբեջանցի» տերմինի հաւաքականութիւնը: Հաւանաբար այս, ինչպէս նաեւ խորհրդային պատմագրութեան ընդհանուր սկզբունքներին կտրուկ չհակադրուելու մղումներով էր Հէյդար Ալիևը խրախուսում ադրբեջանական պատմագրութեան յիշեալ կոնցեպցիան: Հնարաւոր է, որ 1960-ական թուականներին արդէն հիմնականում ձեւաւորուած այս պատմագրական կոնցեպցիայի պատճառով է, որ 1959 թ. յաջորդած 1970 թ. եւ մինչեւ Ադրբեջանի անկախացումը կատարուած մարդահանմանների տուեալներով՝ «ադրբեջանական ժողովրդի» բաղկացուցիչ ընդունուած կովկասալեզու որոշ ժողովուրդներին թուականները յանկարծ, ճիշտ է՝ աննշան, բայց սկսում են աճել: Բայց նոյնիսկ այս պարագայում խօսքը վերաբերում է բացառապէս Դաղստանի եւ Ադրբեջանի միջեւ կիսուած ժողովուրդներին (լեզգիներ, աւարներ, թաթասարներ, դարգիներ, ռուսներ, ցախուրներ, աղուներ, լաքեր): Բաքուն հետեւողականօրէն «չէր յիշում» այն ժողովուրդներին, որոնք ապրում էին բացառապէս Ադրբեջանի տարածքում (ղեբաղներ, հափուլիներ, խինալուզներ, կրիզներ, բուրուզներ, ալիկներ, երգիւններ)

բացառութեամբ ուղիների, ովքեր միշտ մասնաւոր կարգավիճակ ունէին:

Աղիւսակ 6. Կովկասալեզու ժողովուրդների թուաքանակների դինամիկայի պաշտօնական ներկայացումը 1970-1989 թթ. միջակայքում

	1970	1979	1989
Աւարներ	30,735	35,991	44,072
Աղուներ	32	42	204
Դարգիներ	863	486	854
Լաքեր	1,205	1,193	1,878
Լեզգիներ	137,250	158,057	171,395
Ռուսուներ	111	53	336
Թաթասարներ	279	350	558
Ցախուրներ	6,208	8,546	13,318
Ուղիներ	5,492	5,841	6,125

Ադրբեջանի Հնագիտութեան եւ ազգագրութեան ին-տի աշխատակիցների կողմից 1998 թ. հրատարակուած «Азербайджанцы. Историко-этнографический очерк» (Ադրբեջանցիներ. Պատմաազգագրական ակնարկ) աշխատանքում կարծէք թէ ամփոփուած են քսաներորդ դարի «ադրբեջանացման» արդիւնքները: Այստեղ խօսում է այն մասին, որ չնայած Ադրբեջանում կան «իրենց իւրայատկութիւններն ունեցող ու տարբեր լեզուներով խօսող խմբեր», սակայն իրականում պէտք է խօսել ընդհանուր արժէքներ՝ «ադրբեջանական հողը որպէս հայրենիք» ունեցող «ադրբեջանի ժողովրդի մասին», որի «մշակոյթը միջէթնիկական համակցութեան մշակոյթն է»³⁷: Այս աշխատանքը վաւերացնում է «ադրբեջանցիներ» թրջալեզու հաւաքականութեան կողմից

37 Յղում է ըստ Сергей Румянцев, Первые исследования и первые специалисты: ситуация в области социальных и гуманитарных наук в постсоветском Азербайджане (II) աշխատանքի, <http://www.kavkazoved.info/news/2011/09/22/situacia-v-oblasti-nauk-v-postsovetском-azerbajdzhanе-ii.html>:

politika-v-zakavkaze-konstrui rovanie-nacionalnyh-granic-istorij-i-kultur.html.

«ադրբեջանցի» տերմինի վերջնական իւրացումը եւ կանխում Ադրբեջանի տարածքի բնիկ կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդների էթնիկական ինքնութիւնների յաւակնութիւնների բարձրաձայնումը: Իսկ ահա նոյն ինստիտուտի աշխատակիցների կողմից ակադեմիկոս Թիմուր Բունեաթովի խմբագրութեամբ 2007 թ. հրատարակած Ադրբեջանի ազգագրական պատկերը ներկայացնող եռաչափ աշխատանքում «իրենց իւրայատկութիւններն անցնող ու տարբեր լեզուներով խօսող խմբերի» մասին խօսք չկայ, «իւրայատկութիւնները ռեգիոնալ են» եւ աշխատանքում հետեւողականորէն նկարագրուած են Ադրբեջանի «ամբողջ բնակչութեան ադրբեջանցիները» կենցաղը, աւանդոյթները, սովորութիւնները եւ այլն³⁸: Այս աշխատանքն արդէն յայտարարում է ԻԱ. դարի սկզբի Ադրբեջանի «ադրբեջանական ինքնութեան» յայտը՝ Ադրբեջանում միայն ընդհանուր մշակոյթով ադրբեջանցիներ են:

1970-ական թուականներին ակտիւանում են նաեւ ադրբեջանցի «նոր պատրիոտ» պատմաբանները, ովքեր ներկայիս Ադրբեջանի տարածքում ադրբեջանցիներին դիտարկում էին որպէս ամենավաղ շրջանից բնիկ թրքական ժողովուրդ, եւ իրենց բազմաթիւ հրատարակութիւններում խօսում էին այն մասին, որ երկրի թրքացման գործընթացը ԺԱ. դ.-ի հետ կապելու հայեցակէտը երկրին, ադրբեջանական ժողովուրդին վնասակար եւ անհիմն է, իսկ այդ հայեցակէտը ներկայացնողները լաւագոյն դէպքում ռետրոգրադներ են³⁹: Ութսունականների վերջին, փաստորէն, աւարտում է քսաներորդ դարի ալիեւան

ադրբեջանական պատմագրութեան «դասականների» Զիյա Բունեաթովի, Իգրար Ալիեւի, Ֆարիդա Մամեդովայի շրջանը, եւ պատմութեան հայեցակարգի ձեւաւորումն անցնում է կովկասում հնագոյն ժամանակներից թուրքերի եւ թուրքական մշակոյթի անընդհատութեան հայեցակարգի կողմնակիցների ձեռքը, իսկ ադրբեջանցիների էթնոմագումնաբանութիւնը ԺԱ.-ԺԲ. դդ. թուագրող պատմաբանները յայտարարում են թշնամիներ:

Արդէն 2005 թ. հրատարակուած Այդին Բալաեւի «Этноязыковые процессы в Азербайджане в XIX-X веках» եւ այլ աշխատանքներ ամբողջում են այն թեզը, ըստ որի Իլհամ Ալիեւի ժամանակ Ադրբեջանի պատմութեան ինստիտուտը գլխաւորած Իգրար Ալիեւը գլխաւորել է Ադրբեջանի պատմութեան կեղծարարութիւնը. «Ալիեւի քան կէս դար հէնց նա է ղեկավարել ադրբեջանցիների ազգային յիշողութեան դէմ ուղղուած «խաչակրաց արշաւանքը»: Պէտք է ընդունել, որ ադրբեջանցիների էթնոլեզուական պատմութեան կեղծարարութեան գործում նա միայնակ անհամեմատ աւելի մեծ նուաճում ունի, քան արտասահմանեան բոլոր հակաադրբեջանական կենտրոնները միասին: Տառապելով պաթոլոգիկ թուրքատեացութեամբ՝ Ի. Ալիեւը Ի. դ. 40-ական թթ. սկսած իր բազմաթիւ աշխատանքներում յամառօրէն քարոզել է այն գաղափարը, ըստ որի ադրբեջանական ժողովուրդի ձեւաւորման գործում հիմնական դեր խաղացել են հնագոյն Միդիան, Ատրպատականը եւ կովկասեան Աղուանքը բնակեցնող իրանա- եւ կովկասալեզու ժողովուրդները» (էջ 174-175): Նոր պատմաբանների եւ հանրութեան թշնամանքից ադրբեջանական էթնոմագումնաբանները «աղուանական» մեծ ներդրման կողմնակիցներ Զիյա Բունեաթովին եւ Ֆարիդա Մամեդովային մասամբ պաշտպանում է նրանց սկզբունքային հայտեացութիւնը. չնայած նրանք

38 Նոյն տեղում:
39 Ариф Юнусов, Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана, <http://www.kavkazoved.info/news/2011/10/11/mify-i-obrazy-vraga-v-istoricheskoy-nauke-azerbajd-zhana-i.html>.

նոյնպէս ադրբեջանական թրքութեան վաղնջական ակունքները կովկասում չէին տեսնում: Ադրբեջանական պատմութեան աղուանական ծագման շեշտադրողները, ըստ հասարակական կարծիքը հետազոտող Արիֆ Իւնուսովի, ընկալւում են որպէս հայկական ոտնձգութիւններից Ադրբեջանը պաշտպանող մտաւորականներ⁴⁰:

Այս եւ այլ օրինակներ վկայում են, որ Ադրբեջանի տարածքի կովկասալեզու եւ իրանալեզու տեղաբնիկ ժողովուրդներին Ադրբեջանի պատմութեան մէջ որեւէ դերակատարում յատկացնելու շրջանն աւարտուել է: Վերսկսւում է «ադրբեջանցի» էթնոսի թուրքական ինքնութեան վերաներդրման շրջանը: Այդ գործը, որ նախ տարբերայնօրէն, ապա հետեւողականօրէն եւ պաշտօնապէս սկսեց Աբուլֆազ Էլչիբէյը, որոշ ժամանակ անց յստակ ձեւաւորուեց Հէյդար Ալիեւի իշխանութեան երկրորդ շրջանում, իսկ այսօր դարձել է այն ուղեւորը, որով առաջնորդուած է Իլհամ Ալիեւը:

Յիրաւի, ԽՍՀՄ կազմալուծումից յետոյ Ադրբեջանի պատմութեան նոր տարբերակի շարադրանքի խնդիրը Հէյդար Ալիեւին առաւել զբաղեցնող հարցերից մէկն էր: Հէյդար Ալիեւի կեանքի հետազոտութեամբ դոկտորական դիսերտացիա պաշտպանած Իրադա Յուսէյնովան գրում է. «Հէյդար Ալիեւը յատկապէս սեւեռուն ու չաղրութիւն էր դարձնում Ադրբեջանի պատմութեան ստեղծման վրայ: Նա ցոյց տուեց, որ իր ժամանակին ստեղծուած պատմութիւնը գրուել է կոմունիստական գաղափարախօսութեան ազդեցութեամբ եւ պահանջներով... Այդ պատճառով Ակադեմիայի ռազմավարական ծրագրում պատմութեան շարադրանքը նշուած էր որպէս կարեւորագոյն խնդիրներից մէկը: Անհրաժեշտ էր Ադրբեջանի պատմութիւնն

ընդգրկել հնագոյն ժամանակներից մինչեւ ներկային»: Որպէս առաջնահերթ խնդիր ձեւակերպուեց ԺԹ.-Ի. դդ. շրջանը, որի շուտափոյթ շարադրանքի համար Հ. Ալիեւը խոստացաւ շատ խոշոր գումարներ ներդնել: «Ի. դ. վերջին ԺԹ.-Ի. դդ. պատմութեան շարադրանքն անհրաժեշտ էր, քանի որ խորհրդային շրջանի աւագ եւ միջին սերնդի պատմաբանները... թոյլ են տուել տարատեսակ շեղումներ... Ադրբեջանի նախագահի պատմական մեծ վաստակն է, որ ժամանակին «ժողովուրդի թշնամիներ» որակուած եւ մեր յիշողութիւնից ջնջուած շատ հերոսներ վերադարձան պատմութիւն... Նախագահի 1998 թ. յունուարի 30-ի որոշմամբ... հրատարակուեց Ադրբեջանի դեմոկրատական հանրապետութեան պատմութիւնը ներկայացնող փաստաթղթերի եւ նիւթերի 7-հատորանոց ժողովածոյ... Ադրբեջանական հանրապետութեան նախագահի ցուցումով Գ.Ա. պատմութեան ինստիտուտը հրատարակեց Ադրբեջանի պատմութեան 7-հատորանոց աշխատանքը... Պատմական գիտութեան զարգացման գործում Հէյդար Ալիեւի վաստակը շատ մեծ է»⁴¹:

Չնայած Հէյդար Ալիեւը վերախմտաւորեց Ադրբեջանի պատմութիւնը՝ վերսկսելով նորածնունդ ադրբեջանցիների էթնոմագումնաբանութեան թուրքական ուղղութիւնը, բայց նա «ադրբեջանցի» տերմինի պահպանման կողմնակից էր: Իրականում Ադրբեջանի թրքալեզուների ինքնութեան եւ ինքնանուան հարիւրամեայ փնտրտուքը դեռեւս իր տրամաբանական աւարտին չի հասել: Ըստ նոր հայեցակարգի՝ ադրբեջանցիների կովկասեան թուրքական հնագոյն շրջանն արդէն «յետ է տարւում» մինչեւ Ք.ա. III-II հազարա-

41 Ирада Гусейнова, Гейдар Алиев - от политического руководителя к общенациональному лидеру, Баку, «Тэхсил», 2005, էջ 390-392. http://www.anl.az/el_ru/q/qi_qa-oprkol.pdf

40 Նոյն տեղում:

մեակ: Պատմութեան նոր շարադրանքում, ինչպէս ասուեց, կովկասալեզուներն ու իրանալեզուները այլեւս չեն տեղաւորուում, թէ՛ որպէս պատմական անցեալի մասնակիցներ, թէ՛ որպէս ներկայիս Ադրբեջանի «ազգային փոքրամասնութիւններ»: Հէնց այս ծրագիրն է իրականացնում Ադրբեջանի ներկայիս նախագահը՝ Իլհամ Ալիեւը: «Ադրբեջանցիներն» այլեւս «թուրքեր» են, թուրքիայի թուրքերի հետ՝ «մէկ ազգ, երկու պետութիւն»: Եթէ նոյնիսկ Ադրբեջանում օգտագործուում է «ադրբեջանցի» էթնանունը, ապա յաճախ՝ «ադրբեջանական թուրքեր» ձեւակերպմամբ, իսկ թուրքիայում արդէն պաշտօնապէս գործածուում է «Ադրբեջանի թուրքեր» տերմինը: Հէնց վերջերս (23.02.12), թուրքիայի պառլամենտում խօսուած ընդունուած փաստաթղթում խօսուում է խօսալուում սպանուած «ադրբեջանցի թուրքերի» մասին⁴²:

Վերջին շրջանի ադրբեջանական ակադեմիական «հետազօտողները» խօսում են միայն թրքութիւնից, իսկ Պատմութեան ինստիտուտն ամբողջովին լծուել է այդ գործին: Ադրբեջանի պատմութեան ին-տի Լարաբաղի պատմութեան բաժնի վարիչ, պ.գ.դ. Լասրմ Լալիեւը Այսրկովկասի հնագոյն պատմութեան կեղծարարութեան մէջ

մեղադրում է ռուսներին, հայերին եւ ադրբեջանցի այն պատմաբաններին, ովքեր «հայերին եւ ռուսներին ծառայելով՝ նոյնպէս մերժում են ադրբեջանցիների թուրքական ծագումը»: Նա յայտարարում է, որ Ադրբեջանի տարածքում դեռ մինչեւ Ատրպատականի եւ Կովկասեան Աղուանքի հնագոյն պետութիւնների առաջացումը գոյութիւն ունէր թուրքական պետութիւն... եւ դժգոհում է, որ Կովկասեան Աղուանքի տարածքում Ատրաբոնի յիշատակած 26 ցեղերի թրքական ծագումը տեւական ժամանակ մերժուել է պատմագիտութեան կողմից, ինչպէս մերժուել է կովկասեան աղուանների թուրքական ծագումը⁴³:

Ադրբեջանի պետութեան, բնակչութեան եւ թրքալեզու հաւաքականութեան ինքնութեան ձեւաւորման խնդիրները գլխաւորապէս պատմութեան միջոցով լուծելու պաշտօնական դիրքորոշումն, անշուշտ, անմիջապէս արտացոլուեց պատմութեան դպրոցական դասագրքերում: Արիֆ Իւնուսովը գրում է, որ «XX դարի երկրորդ Ադրբեջանական Հանրապետութեան ստեղծումը լուրջ գործընթացներ բերեց ադրբեջանական ներքին պատմագրութեան, իր անցեալի վերաիմաստաւորման խնդիրներում: Ադրբեջանի պատմութեան «մութ էջերը» վերանայելու եւ վերացնելու գործընթացում Ադրբեջանում առաջացան մի շարք էթնիկական ու քաղաքական առասպելներ եւ ստերէոտիպեր, որոնք արտացոլում էին երիտասարդ անկախ պետութեան ոչ միայն հասարակական-քաղաքական բարդ փուլերը, այլեւ նրա պաշտօնական գաղափարախօսութիւնը: Այդ ամէնն արագօրէն յանգեցրեց նոր առասպելների ձեւաւորմանը եւ անմիջապէս արտացոլուեց յետխորհրդային շրջա-

42 <http://regnum.ru/news/polit/1502273.html>. «Ադրբեջանցի թուրքեր» տերմինը, իհարկէ, նոր չէ: Այն յատուկ շեշտադրութեամբ գործածում էին նաեւ Խորհրդային Ադրբեջանի ազգայնական այլախոհները, ինչպէս, օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերի ընկած ադրբեջանցիներից ձեւատրուած յատուկ զօրաջոկատի հրամանատար, ԽՍՀՄ նախկին մայրո, Դուրանգիւսկի կեղծամուտով յայտնի Ա. քո Ֆաթալիբեյլը՝ «Ադրբեջանական թուրքերի հոյակապ ապագայի մասին» մանիֆեստի հեղինակը, որի հիմնական ծրագիրը հայերին եւ Կովկասի ոչ թուրք ժողովուրդներին ոչնչացնելն էր: Դեռեւս վերմախտին ծառայելու տարիներին նա պահանջներ էր ներկայացրել Գերմանիային, որոնցից մէկով պնդում էր իրենց «ադրբեջանցի» չկոչել, այլ՝ «ազերի-թուրք»:

43 Trend.az. 27 апреля 2011: Президент Ильхам Алиев: Необходимо разработать дополнительные механизмы для привлечения азербайджанской молодежи в науку.

նում տպագրուած պատմութեան դասագրքերում»⁴⁴:

Պատմութեան դպրոցական դասագրքերը, բնականաբար, փոխուում են ըստ նոր հայեցակարգերի: «Երբ դասարանի դասագրքում, Ադրբեջանի հին պատմութիւնը ներկայացնող հէնց առաջին բաժնում դասագրքի հեղինակները փորձում են աշակերտներին ներարկել, որ Ադրբեջանը թիւրքերով բնակեցուած հնագոյն երկրներէն է, «դարեւար այդ ժողովուրդը թիւրք է կոչուել, իսկ նրա լեզուն՝ թուրքերէն»: Փաստեր չունենալով եւ հակառակ պատմական ճշմարտութեան՝ նրանք փորձում են թրքացնել նոյնիսկ այնպիսի ակնյայտօրէն ոչ թուրքական երկրներ, ինչպիսիք Մանան եւ Միդիան են: Առաջինի դէպքում ասում է, որ «Մանանյում բնակչութեան հիմնական լեզուն հնագոյն թուրքերէնն էր (նախաթուրքերէնը), իսկ Միդիայի դէպքում՝ յայտարարում է, որ «մեղացիները պատկանում էին արիական ցեղերին»: «Արի» բառը թիւրքական լեզուներով նշանակում է «առաքինի, մաքուր»: Միդիայի արիացիները թիւրքական էթնոս էին»: Ապա եզրակացնում են. «Մ.թ.ա. III-I հազարամեակներում Հարաւային Ադրբեջանի տարածքում ապրում էին թիւրքական լեզուներով խօսող ցեղեր, եւ նրանք այդ երկրի տեղաբնիկ բնակչութիւնն էին»⁴⁵:

Հաւանաբար, դեռ երբեք որեւէ պատմագրութիւն այդքան տատանումներ չի ունեցել իր հիմնական ուղեծրի ընդունման մէջ, որքան վերջին հարիւրամեակի ադրբեջանական պատմագրութիւնը. արագ փոփոխուող քաղաքական իրավիճակներն անմիջապէս ազդում են պատմութեան

ընտրուած հիմնական շեշտադրումների վրայ՝ ստիպելով վերանայել ոչ վաղ անցեալում ընդունելի համարուող հայեցակարգերը: Սակայն կենդանի մարդկանց էթնիկական ինքնութեան ձեւաւորման վրայ պատմութեան միջոցով ազդելու ծրագրի հետ համեմատած՝ պատմութեան շարադրանքն ինքնին շատ քիչ է: Ադրբեջանի թրքալեզու հաւաքականութեան էթնիկական ինքնութիւնը գլխաւորապէս չյստակեցուած պատմութեան շարադրանքի միջոցով ձեւաւորելու փորձը՝ զուգորդած Ադրբեջանի ոչ թրքալեզու տեղաբնիկ էթնիկ միաւորներին ուժացնելու քաղաքականութեան հետ, լարուած վիճակում է պահում Ադրբեջանի հասարակութիւնը: Խորանում է ոչ միայն «ադրբեջանցի», «թուրք», «ադրբեջանցի թուրք» ինքնութիւններից որեւէ մէկի միջոցով ինքնահաստատուելու փորձ անող բնակչութեան ինքնութեան ճգնաժամը, այլեւ սա խորապէս ազդում է Ադրբեջանի տեղաբնիկ ոչ թրքալեզու էթնիկ միաւորների վրայ, որոնցից մասնաւորապէս կովկասալեզուները եւ իրանալեզուները իրենց գոյութեան սոսկական փաստով յատկապէս անցանկալի վկայութիւններ են Ադրբեջանի ներկայիս տարածքի անցեալի ոչ թուրքական պատմութեան:

Ադրբեջանական ինքնութեան փնտրտուրը եւ դրա ձեւերը արձագանքում են Ադրբեջանի ոչ թրքալեզու բնակչութեան էթնիկ միաւորների սեփական ինքնութեան փնտրտուրով:

Ադրբեջանի կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդները ադրբեջանական ինքնութեան փնտրտուրի հուղիւններն են:

Տեւական ժամանակ տեղաբնիկ ժողովուրդների թուրքանակի արհեստական նուազեցման եւ նրանց անցեալի պատմութեան իւրացման ադրբեջանական ծրագիրն, անշուշտ, ուղեկցում էր եւ է այդ ժողովուրդների էթնիկ ինքնութեան ճնշ-

44 Ариф Юнусов, Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана (I), <http://www.kavkazoved.info/news/2011/10/11/mify-i-obrazy-vraga-v-istoricheskoy-nauke-azerbajdzhana-i.html>

45 Նոյն տեղում:

ման ու հնարաւորինս՝ թրքալեզուացման եւ ուծացման քաղաքականութեամբ: Խորհրդային տարիներին հանրակրթութեան ազրբեջանալեզուացման եւ ռուսալեզուացման ծրագրերն այլալեզուների կողմից սկզբում ուղղակի հակազդեցութեան չէին հանդիպում մի շարք պատճառներով. Ազրբեջանի տարածքում մահմեդական միջավայրում անցեալ դարի երեսնական թուականներին սկսուած «հանրային կրթութիւն» երեւոյթն ինքը նոր էր, լեզուական կամ իրական որեւէ այլ աւանդոյթ չուներ, բնակչութեան զգալի մասի համար նոյնիսկ կրթութիւնն ինքնին արժէք չէր: «Հանրային կրթութիւնը» ձեւաւորուած եւ աւանդականանում էր «ազրբեջանցի» տերմինի վարչա-աշխարհագրական իմաստի ներդրմանը համընթաց, «ազրբեջաներէն լեզու» արտայայտութիւնն ինքնին անհասկանալի էր, եւ դրա գործածութիւնը դեռեւս էթնոլեզուական բովանդակութիւն չուներ: Այս ամէնը նպաստում էր հանրային կրթութեան լեզուի ազրբեջանալեզուացմանը՝ առանց յատուկ խոչընդոտների, առաւել եւս, որ երեսնական թուականների ստալինեան բռնութիւններն Այսրկովկասում իրականացում էին գլխաւորապէս «ազգայնականութեան» մեղադրանքով, եւ էթնիկ ինքնութեան պահպանութեանը նախանձախնդիր մարդիկ առաջինն էին ենթարկուած հալածանքների: 1937-38 թթ. փակուեցին 300-ից աւելի թալիշական դպրոցներ, թալիշական տպագրութիւնները, թալիշական ռադիոն, թալիշական մանկավարժական տեխնիկումը, Ազրբեջանի հետազօտական եւ վերլուծական կենտրոնի թալիշական բաժինը, իսկ թալիշ մտաւորականութիւնը ենթարկուեց ռեպրեսիաների⁴⁶: Աւելի ուշ Ազրբեջանի լեզուները

պիտի գրէին. «...1936 թ. ... լեզուներին ոչ միայն զրկեցին մայրենի լեզուով կրթութիւնից, այլեւ... առհասարակ կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից... լեզուների համար... Ազրբեջանի ազրբեջանական եւ ռուսական միջնակարգ դպրոցներում եւ բուհերում կրթութիւնը դարձաւ վճարովի... ստիպում էին յատուկ հարկ վճարել... այն կոչուեց «լեզուի փուլ»՝ լեզուական փող. միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում սովորելու համար հարկաւոր էր տարեկան վճարել 250 ռուբլի, իսկ միջնակարգ մասնագիտական եւ բուհական կրթութեան համար՝ 400 ռուբլի: Հարկը կարելի էր չվճարել, բայց դրա համար անձնագրում «լեզուի» բառի փոխարէն պէտք էր գրել «ազրբեջանցի»: Այդպիսի յուսահատ քայլերի դիմում էին նրանք, ովքեր դրամ չուներին, բայց շատ էին ուզում կրթութիւն ստանալ»⁴⁷:

Տեղաբնիկ ժողովուրդների ազրբեջանական ուծացման ինտենսիւ քաղաքականութիւնը զգալի յաջողութիւն ունէր նաեւ «բազմազգ Ազրբեջանի մշակութային իւրայատկութեան» քարոզչական բառամթերքի ճշող համատարածութեան, Ազրբեջանի տարածքի պատմութեան գրաւոր տեքստի շարադրանքի, ուրեմն նաեւ՝ ազրբեջանական ինքնութեան յետահայեաց պատմականութեան տեւական բացակայութեան, ԽՍՀՄ-ում ազգային քաղաքականութիւնը բացառապէս կենտրոնին՝ Մոսկուային վերագրելու եւ այլ պատճառներով: Այս ամէնին միախառնուած էր նաեւ Ազրբեջանի մահմեդական ժողովուրդների «ընդհանուր թշնամի հայերի» առասպելի՝ խորհրդային տարիներին բանաւոր ներդրումը⁴⁸: «Մեզ հայերին հակադրելով՝ նրանք մեզ լուծեցին սեփական

46 Azərbaycançılığı: этнос или территориальная принадлежность?, <http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-37-51/853-2011-09-01-16-34-23>.

47 <http://www.lnka72.ru/Patrioticheskic-resursy/115-Patrioticheskoe-obedenenie-qRikIin-gafq>.

48 Армяне враги нашей религии?, <http://www.lnka72.ru>

ամբոխին: Մինչ մենք ամբողջ սերունդներ էինք կորցնում, նրանք, խժռելով մեր ազատութիւնն ու մարմինը, ուժ էին հաւաքում, ուժեղացնում էին իրենց պետութիւնը»⁴⁹, - գրում են այսօր լեզուները: «Եղբայր անուանելով՝ խեղդել լեզուի ժողովրդին. ահա թէ որտեղ է ազրբեջանական ազգայնականութիւնը», - դեռեւս 1981 թ. Ազրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Հ. Ալիևին հասցէագրուած նամակում գրել է լեզուի իսկանդեր կազիւրը: «Ինչ ապացուցեմ ես Ձեզ եւ Ձեր շրջապատին, երբ դուք, աքսիոմատիկ երեւոյթները նենգափոխելով, լեզուների հանդէպ բռնութիւնները ներկայացնելով որպէս եղբայրութիւն եւ ինտերնացիոնալիզմ, օր առ օր շարունակում էք հարուածներ հասցնել ազգի կարգավիճակին: Բռնութիւն եւ կամայականութիւն: Նացիոնալիզմ եւ սադիզմ... Ազրբեջանցիներն Ազրբեջանում մէկուկէս միլիոն էլ չկան: Մնացած բոլոր «ազրբեջանցիները» լեզուներ, ուղիներ, թալիշներ, թաթեր, կրիզներ եւ այլոք են, ում դեռեւս երեսնական թուականների կէսերին ուղղակի բռնութեան եւ տեւորի մեթոդներով հարկադրել են «ազրբեջանցի» թողնելու... Ձեր կրքոտ հակալեզուական նացիոնալիզմն ու վառ թշնամութիւնն այնքան նրբօրէն է ընկալուել հանրապետութեան մտաւորականութեան կողմից, որ երբեք, ոչ մի դէպքում ԶԼՄ-ներում չի լինի «լեզուներ» էթնանունը... յայտնուած «լեզուներ» էթնանունը... Սոււմգայիթի այս շաբաթուայ քաղաքային թերթում յօդուած է լոյս տեսել Սոււմգայիթի բանուորների բազմազգ (ինտերնացիոնալ) կազմի մասին: Թուարկուած են բոլոր ժողովուրդները: Սոււմգայիթում հինգ յոյն ժողովուրդները: Իսկ Սոււմգայ, նրանք էլ են թուարկուած: Իսկ Սոււմգայիթում առկայ լեզուների (աւելի քան 20 հազար մարդ) անունը բացակայում է... Սա չէ՞ արդեօք նացիոնալիզմը... Սա՞ է

Ձեր «եղբայրական», «ինտերնացիոնալ» սէրը լեզուի ժողովրդի նկատմամբ...»⁵⁰:

Ազրբեջանի անկախացմանը յաջորդած սոցիալմշակութային եւ քաղաքական գործընթացներն Ազրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների համար միանգամից բացայայտեցին իրենց փաստացի վիճակը. Ազրբեջանի տարածքի թրքալեզուների հաւաքականութիւնը կայացել է, ազրբեջանական պատմագրութեան համաձայն՝ ազրբեջանցիներն Ազրբեջանի պատմական անցեալի միակ դերակատարներն են, իրենք նախաթուրքական ժողովուրդները, ոչ միայն «դուրս են մղուել» իրենց հայրենիքի պատմութեան թատերաբեմից, այլեւ Ազրբեջանի ընթացիկ էթնոքաղաքական եւ սոցիալմշակութային կեանքից, աւելին՝ զգալիօրէն ուծացուել են, երբեմն՝ անդառնալի: Այսօրուայ Ազրբեջանի թրքալեզու բնակչութեան էթնիկ ինքնութեան փնտրտուքն ու ճգնաժամը նոյնպէս ծանր է անդրադառնում տեղաբնիկ իրանալեզու եւ կովկասալեզու ժողովուրդների վրայ: Ազրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների աւարական եւ ցախուրական 23 գիւղական վարչական միաւորների ղեկավարներ, դիմելով ՌԴ նախագահ Վ. Պուտինին, գրում են. «1992 թ.-ից ազգային հարցերով նախագահի խորհրդականը Իդայաթ Օրուլու է... Նա շատ է եղել մեր տարածքներում եւ ամէն անգամ, հիմնաւորելով թրքացման եւ փոքրամասնութիւնների դուրսմղման պետական քաղաքականութիւնը, ասել է. «Մենք ազգային պրոբլեմ չունենք: Մենք բոլորս թուրք-ազրբեջանցիներ ենք... Ազրբեջանի ոչ մի հեռու-տաւալիքով Ազրբեջանի ազգային փոքրամասնութիւնների լեզուներով որեւէ հաղորդում չկայ... աւարներէն, ցախուրներէն լեզուներով որեւէ թերթ չկայ... նոյնիսկ Զաքաթալա քաղաքի տեղական հեռու-ձաքաթալա քաղաքի տեղական հեռու-

50 <http://lezgistan.tv/novosti/azerbajdzhanskij-naciona-lizm-pismo-iskandera-kazieva/>

49 Նոյն տեղում:

տաալիքով... արգելուած են շնորհաւորանքների դէպքում աւարերէն կամ ցախուրերէն երգերը... 1998 թ. յունիսի 28-ին Շամիլի տօնահանդէսին ուստիկանները մահակներով գազանաբար ծեծեցին տօնահանդէսի մասնակիցներին... Զաքաթաւայի վարչակազմի ղեկավար Ռաֆայէլ Մեջիդովը... ասաց. «Կորէք այստեղից, գնացէք Դաղստան, այնտեղ էլ նշէք ձեր շամիլեան տօները»: ... Բելոկանի շրջանում արգելուած է աւարերէնի ուսուցումը... Զաքաթաւի շրջանում Լահիճի գիւղական դպրոցից վաճառել էին ցախուր երեխայներին... ադրբեջանցի ուսուցիչները ասում էին. «Ձեր հանգուցեալներին մեր գերեզմանատներում մի՛ թաղէք, դուք հայեր եք», «Շան սերունդ, ձեզ հարկաւոր է քշել լեռները, դուք պէտք է գիշատիչների պէս ապրէք»... Մենք՝ Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդներս՝ աւարներն ու ցախուրները, այստեղ թերթ, թատրոն, դպրոց, գրադարան, թանգարան... չունենք... շատ ողբերգական է յատկապէս հարեւան Շաքիի շրջանի ուստիկանների վիճակը... Նրանք նոյնիսկ մարդահամարների ժամանակ իրաւունք չունեն իրենց ազգային պատկանելութեան մասին յայտնել... պատմութեան կեղծարարութիւնը եւ աշխարհագրական ու պատմական անունների փոփոխութիւնը նոր թափ են ստացել...»⁵¹:

Թալիչների իրաւունքների պաշտպանութեան կոմիտէի նախագահ Զահիրադդին Իբրահիմովը գրում է, որ «Լենքորանի ուստիկանութեան բաժինը եւ GTV տնօրէնը... արգելել են թալիչերէնի գործածութիւնը իրենց ղեկավարած ձեռնարկութիւններում... մինչդեռ Ադրբեջանի 1936

թ. Սահմանադրութիւնում թալիչ ժողովրդի իրաւունքները պաշտպանուած էին առանձին յօդուածով... որտե՞ղ էր աւելի շատ բռնատիրութիւն, ԽՍՀՄ-ում, թէ՞ Ադրբեջանի Հանրապետութիւնում: Ի՞նչ է տուել մեզ՝ թալիչներին, լեզգիներին եւ աւարներին, ադրբեջանական պետութիւնը: Այդ պետութիւնը խլել է մեր Հայրենիքը, մեր լեզուն, մեր պատմութիւնը, մեր մշակոյթը եւ, վերջապէս, մեր արժանապատուութիւնն ու պատիւը»⁵²:

Ադրբեջանի ոչ թրքալեզու տեղաբնիկ էթնիկ միւսուորները ոչ մի կերպ «չեն տեղաւորուած» Ադրբեջանի թրքալեզուների ադրբեջանա-թուրքական ինքնութեան փնտրտուքում եւ վտանգ են տեսնում այդ տերմինների անորոշութեան, պատմական անցեալի, ներկայ եւ ապագայ յաւակնութիւններում: Ադրբեջանի թալիչ մտաւորական Ֆ. Ֆ. Աբուզադէն փորձում է հասկանալ թուրք ադրբեջանցի տերմինի պատմական եւ ընթացիկ բովանդակութիւնը եւ հնարաւոր հանգրուանը՝ փորձելով որոշակիացնել թալիչների «տեղը» Ադրբեջանի էթնոմշակութային զարգացումներում. «Այն բանից յետոյ, երբ Աթաթուրքը իր երկիրը թուրքիա, իսկ հպատակներին թուրքեր անուանեց, Ադրբեջանը նոյնպէս ընդունեց այդ անունը, եւ սկսեցին իրենց թուրքեր անուանել: Մի օր Ստալինը նրանց անուանեց ադրբեջանցի, եւ նրանք շնորհակալութեամբ ընդունեցին այդ էթնանունը: Բայց խնդիրը չաւարտուեց: 1992 թ. ժողովրդական ճակատի կառավարութիւնը նրանց կրկին թուրքեր անուանեց: Տարօրինակ է, բայց բոլորը գոհ էին այդ անունից: Մինչ այն, որ մէկ տարի անց Հ. Ալիեւը կրկին ներդրեց «ադրբեջանցի» անունը... հանրայայտ է, որ ադր-

51 Президенту Российской Федерации В. В. Путину, Президенту Республики Дагестан М. Г. Алиеву, Послу РФ в АР В. Истратову, Обращение глав аварских и цахурских сельских администраций ЦЦора: «15 лет дискриминации», <http://www.miacum.ru/forum/politics/caucasian-albania-lezgistan/2294>

52 Захираддин Ибрагимов (председатель комитета защиты прав талышского народа), *Есть ли национализм в Азербайджанской Республике?*, <http://lezgistan.tv/novosti/est-li-nacionalizm-v-azerbajdzhanskoj-respublike/>.

բեջանցի թուրքերի ներկայացուցիչները թրքալեզու երկրներում, յատկապէս՝ Թուրքիայում, բարձր ամբիոններից ասում են. «Մենք թուրքեր ենք»... բայց ադրբեջանական բազմազգ լսարանին դիմելիս ասում են. «Մենք ադրբեջանցի ենք»... Կամ իւրաքանչիւր մարդահամարից յետոյ ադրբեջանական ՁԼՄ-ները գրում են, որ «Ադրբեջանի բնակչութեան 90%-ից աւելին ադրբեջանցիներ են», իսկ արտասահմանեան ՁԼՄ-ների հետ հանդիպումներում յայտարարում են, որ «90%-ից աւելին ադրբեջանցի թուրքեր են»⁵³:

«Մենք նպատակ չունենք կազմալուծել եւ քայքայել Ադրբեջանը, գրում է Ֆ. Ֆ. Աբուզադէն: Մեր նպատակը մեր նախնիների հողը փրկելն է, Ադրբեջանի բոլոր ժողովուրդների համար հաւասար հնարաւորութիւններ ստեղծելը: Ակնյայտ է, որ տիրող սային յայտարարուած թուրքական էթնոսը, ի վիճակի չլինելով իրականացնել այդ առաքելութիւնը, անկախութեան ողջ ընթացքում որեւէ անգամ իր հիմնարար կարծիքը չստեղծելով, շարունակում է իր թուաբանակն աւելացնել Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների ուժացման հարկաւորութեան լիարժէք չի՛ գիտակցում շուրջ, եւ դեռեւս լիարժէք չի՛ գիտակցում իր էթնիկական ինքնութիւնը: Չնայած պաշտօնական փաստաթղթերում տիրող սային ժողովուրդը անուանում է ադրբեջանցի, իրականում նրա շատ ներկայացուցիչներ իրենց անուանում են մե՛րթ ադրբեջանական թուրքեր, մե՛րթ թուրքեր»⁵⁴:

Ադրբեջանի լեզգիները, ում մտաւորականների եւ հասարակական առաջնորդ-

ների մէջ շատ են լեզգիական ինքնութեան պահպանութեան շատագոյնները, վտանգ են տեսնում «ադրբեջանցի» տերմինին տրուող նոր իմաստի մէջ. «Գիտակցաբար իրենք իրենց թուրքական տարր համարելով՝ իշխանութիւնները միաժամանակ կանխամտածուած կերպով խառնելով էթնիկական ծագումը եւ քաղաքացիութիւնը, հանրապետութիւնում ապրող բոլոր ազգերին ներառում են «ադրբեջանցի» ազգի մէջ՝ շարունակելով աճապարարութեամբ ազդել հասարակական գիտակցութեան վրայ... Ինչ վերաբերում է մեզ՝ ազգային ինքնութիւնը եւ առանձնայատկութիւնները պահած եւ ադրբեջանա-թուրքական կախաւորում դեռեւս վերջնականապէս չխառնուած լեզգիներին, ապա խնդիրն այսօր առաջուանից անհամեմատ դժուար է. պէտք է դուրս գալ գոյատեւման եւ բունութիւնների վախի ինտեգրիկանութիւնից եւ անցնել մեր պատմական ու մշակութային ժառանգութեան իրական պաշտպանութեանը: Մեր իրական թուաքանակի պահպանութեան եւ աւելացման պայքարում անցնել կոշտ հակազդեցութեան եւ ազգային շահերի կենդանի ցուցադրութեան... ի տարբերութիւն նրանց, մենք չարիք ու պատերազմ չենք ուզում. մենք ուզում ենք մեր ժառանգութեան շարունակութեան հաւասար կենսական պայմաններ... Մեզ հարկաւոր է արմատախիլ անել մեր մայրենի լեզուն հանրայնօրէն օգտագործելու թուրքերի հանդէպ անյարմարութեան բարդոյթը: Նրանք պէտք է իմանան մեր լեզուն, քանի որ նրանք են մեր Հայրենիքում վերաբնակուել, եւ նոյնիսկ այսօր էլ շարունակում է վերաբնակեցումը: Միայն ստրուկն է միշտ խօսում տիրող լեզուով եւ տիրող առաջ շան նման պոճը շարժում... Գործի է դրուել թուրքերի պատմութիւնը մինչեւ աղուականական շրջան հնացնելու եւ որոշ լեզուների

53 Ф. Ф. Абузорова, *А как быть с "азербайджанскими мифами о Талыше"?*, <http://www.regnum.ru/news/polit/1435108.html>; *Азербайджанцы: этнос или территориальная принадлежность?*, <http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-37-51/853-2011-09-01-16-34-23>

54 *Азербайджан в поисках идентичности*, <http://lezgistan.tv/novosti/azerbajdzhan-v-poiskax-identichnosti/>

դրանց կրողների հետ միասին բնական անհետացման քարոզչությունը»⁵⁵:

Ադրբեջանի հիւսիսի կովկասալեզուները իրենց ինքնութեան շարունակականութեան համար սպառնալիք են ընկալում պետութեան՝ իրենց հոծ բնակչութեան տարածքներում ադրբեջանցիներ բնակեցնելու քաղաքականությունը. «...1988-1994 թթ. Ղարաբաղում ապրող ադրբեջանցիներն ու քրդերը երկչոտորէն փախան հայ գինուորներից: Իսկ այդ ընթացքում մեր հազարաւոր տղաները իրենց երիտասարդ գլուխները զոհաբերեցին Ղարաբաղում, ինչն Ալիեւներին օգնեց ամրապնդել իրենց իշխանութիւնն Ադրբեջանում: Այսօր Ալիեւները մեր հողերում վերաբնակեցնում են Ղարաբաղից փախած ադրբեջանցի եւ քուրդ փախստականներին, խլում են մեր տները, Ադրբեջանից արտաքսում են մեր ազգակիցներին: Մեր հողը, մեր բազմաչար բնիկ Հայրենիքը բնակեցնում է նախիջեւանի եւ Վրաստանի ադրբեջանցիներով, եւ դրանում, որքան էլ դառը լինի խոստովանելը, կայ նաեւ մեր մեղքի մեծ բաժինը...»⁵⁶:

Լեզգիները ծանր են տանում յատկապէս Ադրբեջանի պատմական անցեալից իրենց դուրսմղումը. «Կուզէինք պանթիւրքիստներին հարցնել, թէ որտեղից է Առանի, Շիրվանի, Կովկասեան Աղուանքի եւ Մուղանի իրական տէրերի՝ մեզ հետ կապուած հարցերը լուծած լինելու նրանց ինքնավստահութիւնը: Մի՞թէ պարզամտօրէն կարծում են, որ մենք այլեւս երբեւէ ոտքի չենք կանգնելու: Դուք վստահ էք, որ մեզ բնաջնջել էք երկրի երեսից:

Մեր մզկիթները, կառոյցները, ունեցուածքը իւրացնելով՝ դուք կարծում էք, որ լուծե՞լ էք մեր հարցերը: Մեր գերեզմանները, մեր հետքերը ջնջելով («Ղաբալայի»⁵⁷ «պեղումներով», կարգա՝ Ղաբալայում մեր անցեալի ոչնչացումով)՝ դուք կարծում էք՝ մեզ ոչնչացրի՞ք: Սխալու՞մ էք: Դուք մի կաթիլ էք մեր Պատմութեան ովկիանոսում... դուք... նետուեցիք վիրաւոր եւ արիւնաքամ ժողովուրդների վրայ եւ լուծեցիք ձեր մէջ, վայնախնների եւ չերքեզների օրինակը թուրքիայում մեր աչքի առաջ էք»⁵⁸:

Լեզգիական ինքնութեան պահպանութեան գաղափարի առաջնորդները փաստեր են թուարկում, թէ ինչպէս Ադրբեջանի շիա հոգեւորականները եւ աշխարհիկ իշխանութիւնը զանազան կրօնական հետապնդումներ են իրականացնում սուննիզմի հետեւորդ լեզգիալեզու բնակչութեան նկատմամբ, փոխում են տեղանունները, հետապնդում են մարդկանց⁵⁹: Վրէժի զգացումից նրանք ադրբեջանցիներին կոչում են իրենց կողմից տրուած քամահրական անուններով. կամ շեշտուած թուարկում են ադրբեջանցիներին տրուող բազմաթիւ էթնանունները՝ հեզնելու համար նրանց ինքնութեան լղոզուածութիւնը. «Լեզգիները ձեզ անուանում են «ցապաշ» (ձիու թրիք), «մուղալ», «ագեր», «ղաջար», բայց, չգիտես ինչու, ոչ «ադրբեջանցի» կամ «թուրք»... Ձեր մօտ, յարգելի՛ «մուղալներ» («մուսուլման», «թաթար», «թուրք», «թիւրք», «ղըզըլբաշ», «թարաքեամա», «ղաջար», «ցապ», «այրըմ», «ագեր», «ադրբեջանցի», «փաղար»

55 Мы богаче чем враг и свободнее, чем они!, <http://lezgistan.tv/novosti/my-bogache-chem-vrag-i-svobodnee-chem-oni/>
56 Война с армянами в Карабахе – «не наша война»: обращение общественных организаций Азербайджана, <http://lezgistan.tv/novosti/vojna-s-armyana-mi-v-karabaxe-ne-nasha-vojna-obrashhenie-obshhestvennyx-organizacij-azerbajdzhana/>.

57 Հայկական ադրիպների Կապաղալը:
58 Шихмет Самурви, Почему армяне или мой ответ выкорьмьшам пантюркизма, <http://lezgistan.tv/novosti/pochemu-armyane-ili-moj-otvet-vykormysham-pantyurkizma/>.
59 Ахмеднаби Ахмеднабиев, Азербайджан: война с памятью, <http://lezgistan.tv/novosti/azerbajdzhan-vojna-s-pamyatyu/>.

եւ այլն) լեզգիների հետ չստացուեց, նրանք պահպանեցին եւ կը պահպանեն իրենց ազգութիւնը, արդէն ընթանում են հակառակ գործընթացներ: Մենք ինչպէս եղել ենք լեզգի, այդպէս լեզգի էլ մնացել ենք: Իսկ դուք փնտրում էք, թէ ո՞վ էք... Մի՛ մոռացէք, ինչպէս վաղեմեցիք հայերին, յետոյ փնտրում էիք խառը հայերի, յետոյ հայկական արիւն էիք փնտրում. ուղիների մէջ, յետոյ փորձում էիք լեզգիներին մեղադրել դաւաճանութեան մէջ... Հայերը գնացին... Ո՞վ է յաջորդը, լեզգիները: Մենք այդ ամէնը լսել եւ տեսել ենք... դուք չէք փոխուի...»⁶⁰:

Ադրբեջանական ինքնութեան փնտրտուքում, իհարկէ, առանձին թեմա է հայատեացութեան ներդրումը: Այն առանձին սրութեան է հասնում մասնաւորապէս թրքական ինքնութեան թեմայի զարգացումներում, որի ձեւաւորման խոչընդոտողները, ըստ ադրբեջանական նոր դպրոցական դասագրքերի, «սեւ հագուստով անհաւատները»՝ հայերն էին եւ հայերն են, ովքեր միաժամանակ Ադրբեջանի եղբայրական ժողովուրդների միջեւ թշնամութիւն կան ժողովուրդների միջեւ թշնամութիւն սերմանողներն են: «Հինգերորդ դասարանի աշակերտներն, օրինակ, իրենց պատմութեան առաջին իսկ դասագրքից տեղեկանում են, որ բոլոր թիւրքերը եղբայրներ են, բայց թշնամիների ջանքերով եղբայրների մէջ տարածայնութիւններ են ընկել... թիւրքերի համար այս ահռելի ողբերգութեան մեղաւորը... «սեւ հագուստով անհաւատներն են» (դասագրքում յաճախ հանդիպող այս բառակապակցութիւնը ընդգծուած է)... մեր արեանը ծարաւ դաւադիր թշնամին կազմալուծում էր մեր սրբազան հաւատքի թուլացման եւ մեկուսացման նպատակով դիմում են ամէն տեսակ դաւադիր

եւ ստոր արարքների», եւ իհարկէ, հայերն են թշնամութիւն սերմանում Ադրբեջանի ժողովուրդների միջեւ, ու միայն «Համագալին հերոս Հէյդար Ալիեւին յաջողուեց դիմագրաւել այդ դաւադիր մտայղացումներին... խափանելով Ադրբեջանի թուրքամահազական ժողովուրդների միասնութիւնը կազմալուծելու սեւ հագուստով անհաւատների ծրագրերը»⁶¹:

Լեզգի մտաւորականները գրում են. «Ադրբեջանական քարոզչութիւնը մթագնում է լեզգիների ազգային գիտակցութիւնը... նրանք միանշանակ համոզուած են, որ իրենց կրօնական բոլոր պրոբլեմներ թշնամին հայերն են... Յատուկ ստեղծուած էթնիկական բովանդակութեան էլիկտրոնային ռեսուրսների էջերում քարոզում է, որ 1904-1905 եւ 1918-1920 թթ. հայերը զանգուածօրէն ոչնչացրել են լեզգիներին, որ ադրբեջանա-դարաբաղեան կոնֆլիկտի սահմանային դօտում հայերը սպանում են լեզգի զինծառայողներին: Տարօրինակ գուգադիպութեամբ Ադրբեջանի պաշտպանութեան նախարարութեան կողմից հաստատուած է հէնց լեզգի զինծառայողների զոհուելը»⁶²:

Հայերին ընդհանուր թշնամի ներկայացնելու միջոցով ներքին համախմբում ձեւաւորելու քարոզչութիւնը, սակայն, ցանկալի արդիւնք չի տալիս: Վիրաւորուած եւ շարունակաբար վիրաւորուող էթնիկ արժանապատուութիւնը ձեւաւոր

60 <http://www.regnum.ru/news/1436873.html#ixzz1VUkZvzA3>.

61 Я. Махмудлу, Р. Халилов, С. Агаев. Отечественое. Учебник для 5 класса, Баку, «Тэхсил», 2003, с. 211, с. 295. Յղում է քստ Ариф Юнусов, Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана (II), <http://www.kavkazoved.info/news/2011/10/12/mify-i-obrazy-vraga-v-istoricheskoy-nauke-azerbajdzhana-ii.html>.
62 Вагиф Керимов (Lezgivi), Лезгиты в Южном Лезгистане хотят, чтобы Северный присоединился к ним, <http://lezgistan.tv/novosti/lezhginyv-yuzhnom-lezgis-tane-xotyat-chtoby-severnoy-pri-soedinilsya-k-nim/>

